

Եվրոպական դատարանի պրակտիկան և ընթացակարգը
Ընդունելիության մասին որոշումն ան ընդունումից հետո

3.1. ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Գանգատն ընդունելի հայտարարելուց հետո Դատարանը նախաձեռնում է գործի քննությունը և եթե անհրաժեշտ է, իրականացնում է հետաքննություն (հոդված 38): Պալատի նախագահը մատնանշում է գործի էության վերաբերյալ այլ գրավոր դիմումներ և/կամ նոր ապացույցներ ներկայացնելու ժամկետները, եթե այդպիսիք պահանջվում են: Դատարանը կարող է հարցաքննել վկաներին և քննությունն իրականացնել դեպքի վայրում (տես՝ ստորև)¹, թեպետ դա հազվադեպ է տեղի ունենում: Մեծամասամբ Դատարանն ի գործ է հաստատել փաստերը՝ ելնելով իր ունեցած փաստաթղթային ապացույցներից: Նկատի ունենալով նախքան Եվրոպական դատարան գանգատ ներկայացնելը ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառելու մասին Կոնվենցիայի պահանջը, շատ դեպքերում նշանակալի փաստերը ազգային դատարանների կողմից վճիռներ կայացվելուց հետո չեն վիճարկվում:

Դատարանը շարունակաբար ընդգծում է, որ հակված չէ (առանց դրա համար բավարար հիմքերի) կասկածի տակ դնել ազգային դատարանների վճիռները. «այն դեպքում երբ ներպետական վարույթներն ավարտվել են, ազգային դատարանների կողմից բերված փաստերի գնահատականը սեփական գնահատականով փոխարինելը Դատարանի խնդիրը չի հանդիսանում»²: Ավելին, թեպետ Դատարանի համար ազգային դատարանների եզրակացությունները որոշիչ չեն, կպահանջվեն «հանդիչ փաստարկներ, որոնք հիմք կտան Դատարանին շեղվելու ներպետական դատարանների կողմից հաստատված փաստերից»³: Դատարանը նշել է նաև, որ «գիտակցում է իր օժանդակ դերը և պետք է զգուշություն ցուցաբերի առաջին ատյանի դատարանի գործառույթներ իրականացնողի դերում հանդես գալիս, բացառությամբ այն դեպքերի, երբ կոնկրետ գործի հանգամանքներում դա անխուսափելի է»⁴: Սակայն Դատարանը նշել է, որ եթե գանգատներում կան Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման մասին պնդումներ, ապա պետք է «առանձնապես խորը ուսումնասիրություն» իրականացնի, նույնիսկ եթե կոնկրետ գործով ներպետական վարույթները և հետաքննությունն արդեն տեղի են ունեցել»⁵: Կոնվենցիան պահանջում է, որպեսզի պատասխանող պետությունը Դատարանի կողմից փաստերի հաստատման նպատակով իրականացվող ցանկացած հետաքննության (ինչպիսի եղանակով էլ այն իրականացվի) համար ապահովի «բոլոր անհրաժեշտ պայմանները» (հոդված 38, կետ 1(ա)); հակառակ դեպքում այդ դրույթի հիման վրա պետությունը կարող է քննադատվել Դատարանի կողմից⁶: Տեղեկատվություն կամ փաստաթղթային ապացույցներ⁷ չտրամադրելը կամ դրանց ոչ ժամանակին տրամադրելը կարող են Դատարանին դրդել հետևություններ անելու մեղադրանքների հիմնավորվածության մասին (հատկապես երբ դիմողի պնդումները հաստատող կամ հերքող տեղեկատվությունը

² Տե՛ս, օրինակ, «հունական գործը» (1969) 12 YB 1 (*Դանիան, Նորվեգիան, Շվեդիան* և Նիդեռլանդներն ընդդեմ Դանիայի (*Denmark, Norway, Sweden and the Netherlands v Greece*), գործը, թիվ 3321 / 67, թիվ 3322 / 67, թիվ 3323 / 67 և թիվ 3344 / 67, 5.11.69, Yearbook of the European Convention on Human Rights, Vol. 13, 1969); *Կիպրոսը ընդդեմ Թուրքիայի* (*Cyprus v Turkey*), գործը թիվ 6780 / 74 և թիվ 6950 / 75, 10.7.76 (1975) 2 DR 125, (1982) 4 EHR 482 գործերը; *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության* (*Ireland v UK*), գործը, 18.1.78, (1979-80) 2 EHR 25, Շարք Ա, № 25; Ֆրանսիան, Նորվեգիան, Դանիան Շվեդիան և Նիդեռլանդներն ընդդեմ Թուրքիայի (*France, Norway, Denmark Sweden and the Netherlands v Turkey*), գործը, թիվ 9940-9944 / 82, 7.12.85, (1986) 8 EHR 205, DR 31:

² Տե՛ս, օրինակ, *Քլասսը ընդդեմ Գերմանիայի* (*Klaas v Germany*), 22.11.93, (1994) 18 EHR 305, կետ 29:

³ Նույն տեղում, կ. 30

⁴ Տե՛ս, օրինակ, *Թանլին ընդդեմ Թուրքիայի* (*Tanli v Turkey*), գործը թիվ 26129 / 95, 10.4.01, (2004) 38 EHR 3, կետ 110:

⁵ *Ռիբիչը ընդդեմ Ավստրիայի* (*Ribitsch v Austria*), գործը թիվ 18896 / 91, Շարք Ա, թիվ 336, 4.12.95, (1996) 21 EHR 573, կ. 32; *Ավսարը ընդդեմ Թուրքիայի* (*Avsar v Turkey*), գործը, թիվ 25657 / 94, 10.7.01, (2003) 37 EHR 53, կետ 283; *Աքթաշը ընդդեմ Թուրքիայի* (*Aktas v Turkey*), գործը թիվ 24351 / 94, 24.4.03, (2004) 38 EHR 18, կետ 271:

⁶ Տե՛ս, օրինակ, *Թանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի* (*Tanrikulu v Turkey*), գործը, թիվ 26763 / 94, 8.7.99, (2000) 30 EHR 950, 71 և 98 կետեր:

⁷ *Օրհանը ընդդեմ Թուրքիայի* (*Orhan v Turkey*), գործը, թիվ 25656 / 94, 18.6.02:

մատչելի է միայն պետության համար)⁸: Այսպես, *Աքթաշը ընդդեմ Թուրքիայի (Aktas v Turkey)* գործում⁹, որի առարկան դիմողի կալանավորված եղբոր մահն էր, Դատարանն նմանօրինակ հետևություն է արել երեք պատճառով. կառավարությունը չէր կարողացել նույնացնել դիմողի եղբոր մահն արձանագրած բժշկի անձը; կառավարությունն առարկել է դիմողի, նրա ընտանիքի և ներկայացուցիչների ներկայությամբ տասնմեկ վկաների հարցաքննության դեմ; այն լուսանկարները, որոնցում, ինչպես պնդվում էր, պատկերված էր դիմողի եղբոր մարմինը, Դատարանին էին տրամադրվել միայն վկաների հարցաքննության ժամանակ: Համապատասխանաբար, Դատարանն *Աքթաշի* գործով գտավ, որ թուրքական կառավարությունը չի կատարել 38(1) հոդվածով սահմանված իր պարտավորությունները:

Դատարանի Կանոնակարգի հավելվածը (Ա1-ից մինչև Ա8 Կանոնները) սահմանում է գործի փաստերի հաստատման պրակտիկան և ընթացակարգը: Փաստերի պարզաբանման նպատակով, Դատարանը կարող է իրականացնել «ցանկացած հետաքննություն», այդ թվում պահանջել գրավոր ապացույցներ և լսել վկային, փորձագետին կամ ցանկացած այլ կարգավիճակ ունեցող անձի (Կանոն Ա1(1)): Պալատը կարող է փաստերը հաստատելու և դեպքի վայրում հետաքննություն անցկացնելու կամ որևէ այլ ճանապարհով ապացույցներ ձեռք բերելու նպատակով նշանակել ցանկացած թվով դատավորներ: Դա արվում է գանգատն ընդունելի ճանաչելուց հետո (թեպետ բացառիկ դեպքերում Կանոններն այդպիսի հնարավորություն են նախատեսում նախքան ընդունելիության մասին որոշման ընդունումը՝ Կանոն Ա1(3)): Դատարանի պատվիրակությանը օգնելու նպատակով Պալատը կարող է նաև արտաքին փորձագետներ ներգրավել (Կանոն Ա1(3)), իսկ երրորդ կողմերը կարող են հետաքննությանը մասնակցության թույլտվություն ստանալ (Կանոն Ա1(6)): Ե՛վ պատասխանող-պետությունը, և՛ դիմումատուն պետք է հետաքննություն անցկացնելու գործում օժանդակություն ցույց տան Դատարանին (Կանոն 2(1)): Եթե ինչ-որ գործողություններ, օրինակ՝ փորձագետի եզրակացություն ստանալը, ձեռնարկվում են Կոնվենցիայի մասնակից պետության խնդրանքով, ապա, համաձայն Դատարանի Կանոնակարգի, դրա հետ կապված ծախսերը հոգում է տվյալ պետությունը, եթե Դատարանն այլ որոշում չի ընդունում (Կանոն Ա5(6)): Այլ իրավիճակներում Դատարանն է որոշում, թե ովքեր պետք է վճարեն ծախսերը՝ Եվրոպայի Խորհուրդը, կամ դիմողը, կամ երրորդ կողմը, ուն խնդրանքով կամ ուն անունից հանդես է գալիս տվյալ անձը: Ծախսերի չափը որոշում է պալատի Նախագահը: Սակայն, դիմողից գործնականում երբեք չեն պահանջում վճարել փորձագետների կամ վկաների ծախսերը:

Դատարան ներկայացվող ապացույցների տեսակին ներկայացվող խիստ պահանջներ չկան (տե՛ս, ստորև՝ 6.21-ում): Հետևաբար, դիմողները և նրանց խորհրդատուները պետք է պատրաստ լինեն Դատարանին տրամադրել տարբեր տեսակի ապացույցներ, օրինակ՝ լուսանկարչական, տեսանյութեր կամ աուդիոնյութեր: Այսպես, *Սկոցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի (Scozzari and Giunta v Italy)* գործում Դատարանը ուսումնասիրել է երեխաների հետ հանդիպումների տեսանյութերը և ձայնագրությունները:¹⁰

Դատարանին կանոնավոր կերպով տրամադրվում են միջկառավարական կազմակերպությունների և իրավապաշտպան ոչ կառավարական կազմակերպությունների մշակած զեկույցներ, և Դատարանը հաճախ է հղում է կատարում դրանց: Օրինակ՝ բանտերի վատ պայմաններին վերաբերող գործերում Դատարանը կարող է հաշվի առնել Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպայի կոմիտեի (ԽԿԵԿ) (Եվրոպայի Խորհրդի մարմիններից մեկն է) թարմ հաշվետվությունները: Այսպես, *Պուգոսն ընդդեմ Հունաստանի (Dougoz v Greece)* գործում¹¹ Դատարանը 3-րդ հոդվածի խախտումն արձանագրելիս, հաշվի առավ ոստիկանության բաժանմունքում և ձերբակալվածներին պահելու վայրի պայմանների մասին ԽԿԵԿ հաշվետվությունները, իսկ *Պիրսն ընդդեմ Հունաստանի (Peers v Greece)* գործում Դատարանը հաշվի առավ Կորիդալլոս բանտի վերաբերյալ ԽԿԵԿ հաշվետվությունը¹²:

Դատարանը միշտ չէ, որ սահմանափակում է իրեն *Նոր* ապացույցներ ներկայացնելը:

⁸ !± €⊗!>³ €δü.. -!à £è", ³ İü ⁴á!áóúúÉè!à "", ³² €ü €!)Ujı vsbş !w!UvslFz*!Ý" ³. áè ì €⁻ !34642 V! :5 -!24 / /11 -!)3112 *!44 ! F I S S 7 -77.78! É² É³ ;!

⁹ Թիվ 24351/94, 24.4.03, (2004) 38 EHRR 18:

¹⁰ Թիվ 39221/98 և թիվ 41966/98, 13.7.00, (2002) 35 EHRR 12, 10,94 և 176 կետեր:

¹¹ Թիվ 40907/98, 6.3.01 (2002) 34 EHRR 61:

¹² Թիվ 28524/95, 19.4.01, (2001) 33 EHRR 51, կետ 61:

Դատարանին սկզբունքորեն ոչինչ խանգարում գանգատն ըստ էության քննելիս հաշվի առնել ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն և նոր փաստարկներ, եթե Դատարանը գտնում է, որ դրանք առնչվում են գործին: Նոր տեղեկատվությունը կարող է օգտակար լինել, օրինակ, Պայմանավորվող պետության կողմից տրված գնահատականի հաստատման կամ հերքման համար: Այդպիսի «նոր» նյութերը կարող են ընդունելի ճանաչված գանգատի հիմքում ընկած փաստերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ, կամ այդ փաստերին առնչվող իրավաբանական փաստարկներ լինել¹³:

ԿԱ-ն ընդդեմ Ֆինլանդիայի (*KA v Finland*) գործում¹⁴, որը վերաբերում է դիմողի երեխաներին 1992թ.-ին պետության խնամակալությանը հանձնելուն, կառավարությունը Եվրոպական դատարանին է ներկայացրել լրացուցիչ ապացույցներ (ներառյալ պետական ծառայողի գրառումները, որոնք գրվել են 1992-ից մինչև 1996թթ. ընկած ժամանակահատվածում), փորձելով արդարացնել ձեռնարկված միջոցները: Սակայն, քանի որ այդ տեղեկատվությունը մատչելի չի եղել իրավասու պետական մարմիններին և կողմերին, Դատարանը գտավ, որ դա չի կարող էական նշանակություն ունենալ 8-րդ հոդվածի խախտման մասին որոշում ընդունելու համար:

3.1.1 Փաստերի հաստատման ուղղված լսումները և դեպքի վայրում իրականացվող հետաքննությունը

Զնայած նրան, որ Դատարանը, ինչպես վերը նշվեց, զգուշորեն է մոտենում գործերի փաստերի հաստատմանը, այն դեպքերում, որտեղ փաստերի վերաբերյալ կողմերի միջև կան լուրջ հակասություններ, որոնք հնարավոր չէ լուծել ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու միջոցով, Դատարանը կարող է փաստերը պարզաբանելու նպատակով անցկացնել լսումներ, լսել վկաների ցուցումները և հետաքննություն իրականացնել դեպքի վայրում: Նախկինում այդ գործառույթն իրականացնում էր Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը:

Օրինակ, *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Ireland v UK)* գործում¹⁵, որն առնչվում է անվտանգության բրիտանական ուժերի կողմից կասկածյալների՝ Իռլանդիայի հանրապետական բանակի անդամների ձերբակալությանն ու կալանքի տակ պահելուն, Եվրոպական հանձնաժողովը լսել է 119 վկայի: Դատարանի կողմից *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey)* գործով¹⁶ վճիռ կայացնելուց առաջ Եվրոպական հանձնաժողովը վկայություններ էր լսել Ստրասբուրգում, Նիկոսիայում և Լոնդոնում, իսկ Յանձնաժողովի պատվիրակներն այցելել էին սահմանային կետ, դատարանի շենք և Յուսիսային Կիպրոսում գտնվող հույն-կիպրոսցիների գյուղ: *Պոլտորսկին ընդդեմ Ուկրաինայի (Poltoratskiy v Ukraine)* գործում¹⁷ Յանձնաժողովը վկաներին լսել է Կիևում և այցելել է Իվանովո-Ֆրանկիվսկի բանտ՝ գնահատելու համար մահապատժի դատապարտված բանտարկյալների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը: *Բալեմեզը ընդդեմ Թուրքիայի (Balyemez v Turkey)* գործում¹⁸ և երկարատև հացադուլների հետ կապված այլ գործերում Դատարանը կազմակերպել է բանտում դիմողների զննումը բժշկական փորձագետների կողմից:

Դատարանի կողմից գործի փաստերը հաստատելու նպատակով իրականացվող հետաքննության համար «բոլոր անհրաժեշտ պայմանները» պետության կողմից ապահովվելու պահանջը (հոդված 38, կետ 1 (ա)), ինչպես վերը նշվեց, հավասարապես վերաբերում է նաև փաստերի հաստատման լսումներին և դեպքի վայրում իրականացվող հետաքննությանը: Բացի դրանից, ԱԶ Կանոնը պետությունից պահանջում է «գործընթացը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ օժանդակություն և պայմաններ» տրամադրել Դատարանի պատվիրակությանը: Պետությունը պարտավոր է նաև ապահովել Դատարանի պատվիրակության և բոլոր դիմողների, վկաների և փորձագետների ազատ տեղաշարժն ու պատշաճ անվտանգությունը, և «ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի պատվիրակության

¹³ ԿԱ-ն ընդդեմ Ֆինլանդիայի (*KA v Finland*), գործը, թիվ 22751/95, 14.1.03, կետ 89

¹⁴ Թիվ 22751/95, 14.1.03:

¹⁵ 18.1.78, (1979-80) 2 EHRR 25, Շարք Ա, թիվ 25:

¹⁶ Թիվ 25781/94, 10.5.01, (2002) 35 EHRR 30:

¹⁷ Թիվ 38812/97, 29.4.03:

¹⁸ Թիվ 32495/03: Տես՝ Եվրոպական դատարանի մամլո հաղորդագրությունը, 6.9.04:

առջև վկայի ցուցմունքներ տալը կամ նրան որևէ օժանդակություն ցուցաբերելը ոչ մի անձի կամ կազմակերպության համար բացասական հետևանքներ չառաջացնեն» (Կանոն Ա2 (2) (տե՛ս, նաև, վերը՝ 2.4.14): Պետությունը, հետևաբար, պարտավոր է հետաքննություն վարելու գործում լիակատար օժանդակություն ցուցաբերել Դատարանին: *Շամակը և այլոք ընդդեմ Վրաստանի և Ռուսաստանի (Shamayev and others v Georgia and Russia)* գործում¹⁹ Դատարանի պատվիրակությանը թույլ չէին տվել այցելել կալանքի տակ պահվող՝ արտաքսված հինգ դիմողների, ովքեր գտնվում էին Ստավրոպոլի երկրամասային դատարանի իրավազորության ներքո, ինչը ստիպեց Դատարանին՝ կառավարությանը հիշեցնել Կոնվենցիայի հոդված 38-ի, 1-ին կետով և 34-րդ հոդվածով սահմանված իր պարտավորությունների մասին և վերահաստատել, որ «դիմողներին այցելելու հարցը առնչվում է միջազգային իրավունքին՝ մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը, Ռուսաստանի օրենսդրության համաձայն, գերակայություն ունի ներպետական իրավունքի հանդեպ և, հետևաբար, պետք է լուծվի բացառապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից»²⁰: Ավելին, Դատարանի լսումներին վկաների ներկայությունը չապահովելը կարող է Դատարանին հիմք տալ մեղադրանքների հիմնավորված լինելու մասին հետևություններ անելու²¹:

1990-ական թվականների կեսերից Թուրքիայի դեմ անհատների կողմից բերված մի շարք գանգատներում նախկին Յանձնաժողովը և նոր Դատարանը գործի փաստական հանգամանքների շուրջ կողմերի միջև առկա լուրջ տարաձայնությունների հարցը լուծելու նպատակով Ստրասբուրգում և Թուրքիայում փաստահավաք լսումներ են անցկացրել: Թուրքիայի դեմ բերված գանգատներն առնչվում էին լուրջ խախտումների՝ ներառյալ գյուղերի ավերումը, արտադատական սպանությունների (extrajudicial killings) ու խոշտանգումների դեպքերը, որոնք տեղի էին ունեցել Թուրքիայի հարավ-արևելքում, ուր արտակարգ դրություն էր հայտարարվել: Այդ գործերից շատերում ազգային իշխանությունները մեղադրանքների առնչությամբ արդյունավետ հետաքննություն չէին իրականացրել և, փաստորեն, ներպետական դատարաններն էլ գործի փաստական հանգամանքների ուսումնասիրություն չէին իրականացրել:

Ստրասբուրգյան մարմիններն ընդունում են փաստերի նմանօրինակ հաստատման ժամանակ իրենց հնարավորությունների սահմանափակ լինելը²²: Յնարավոր չէ վկաներին ստիպել ներկայանալ, և պատասխանող-պետությանն անհնար է կարգադրել ներկայացնել կոնկրետ փաստաթղթեր: Բարդություններ կարող են լինել նաև բանավոր ցուցմունքների հետ կապված, որոնք ստացվում են թարգմանիչների միջոցով, և, իհարկե, Յանձնաժողովն ու Դատարանը բնականաբար անմիջականորեն ծանոթ չեն տվյալ տարածաշրջանի կոնկրետ պայմաններին:

Անշուշտ, հետռեֆորմյան Դատարանում որոշ անձիք, նյութական ծախսերի և գործի քննության ձգձգման նկատառումով, հակված չեն փաստահավաք լսումներ անցկացնել: Նման կարգի լսումները հաճախ խլում են ընդհուպ մինչև մեկ շաբաթ ժամանակ և պահանջում են Դատարանի առնվազն հինգ կամ վեց աշխատակիցների (սովորաբար երեք²³ դատավորների, քարտուղարի ու իրավաբանների, ինչպես նաև թարգմանիչների) ներգրավում: Չնայած այդ խնդիրներին, նոր Դատարանը մի շարք փաստահավաք լսումներ և/կամ դեպքի վայրում հետաքննություններ էր անցկացրել՝ այն գործերով, որտեղ դիմողի գանգատն առաջին հայացքից (*prima facie*) հիմնավորված էր: Ակնհայտորեն՝ Կոնվենցիայի ենթադրյալ կոպիտ խախտումների վերաբերյալ գործերում, որոնց կապակցությամբ ներպետական ատյաններում հետաքննություն չի իրականացվել, փաստահավաքության հարցում Դատարանի դերը խիստ կարևորվում է Եվրոպական կոնվենցիայով նախատեսված ընթացակարգում, առանց որի իրավունքների լուրջ խախտումների զոհերին չափազանց դժվար կլիներ Ստրասբուրգում վերականգնել իրենց խախտված իրավունքները:

¹⁹ Թիվ 36378/02:

²⁰ Եվրոպական դատարանի մամլո հաղորդագրություն, 24.10.03:

²¹ Տե՛ս, օրինակ, *Աքթաշը ընդդեմ Թուրքիայի (Aktaş v Turkey)* գործը, թիվ 24351/94, 24.4.03, (2004) 38 EHRR 18:

²² Տե՛ս, օրինակ, *Մեհմեթ Էմին Ակդենիզը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Mehmet Emin Akdeniz and Others v Turkey)*, գործը, թիվ 23594/94, Coom. Rep. 10.9.99, կետ 384:

²³ Երբեմն չորս դատավոր. տե՛ս, օրինակ, *Ադալյին ընդդեմ Թուրքիայի (Adaly v Turkey)*, գործը, թիվ 38187/97, Եվրոպական դատարանի մամլո հաղորդագրությունը, 23.6.03; երբեմն երկու դատավոր. տե՛ս՝ Ն-ն ընդդեմ Ֆինլանդիայի (*N v Finland*), գործը, թիվ 38885/02, Եվրոպական դատարանի մամլո հաղորդագրությունը, 19.3.04:

Թուրքիայի դեմ բերված գործերից բացի²⁴, հետաքննարկման Դատարանը փաստահավաք լսումներ է անցկացրել և/կամ առաքելություններ է իրականացրել նաև մի շարք այլ Պայմանավորվող պետություններում: Օրինակ, *Վալաշինասի* գործով Դատարանի պատվիրակները Լիտվայում հարցաքննել են վկաներին և այցելել բանտ²⁵: 2003 թվականի մարտին, չորս դատավորներից բաղկացած պատվիրակությունը Քիշինեվում և Մոլդովայի Տիրասպոլ քաղաքում լսել է 43 վկայի՝ *Իլիաշկուն և այլոք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի (Ilascu and Others v Moldova and Russia)* գործով²⁶, որում մոլդովացի դիմողները գանգատվում էին Ռուսաստանի կողմից գրավված Մերձդնեստրիայում Կոնվենցիայի տարբեր խախտումների կապակցությամբ: Լսումները տեղի են ունեցել տարբեր վայրերում: Մոլդովայում տեղակայված ԵԱՀԿ-ի առաքելությունում, բանտում և Տիրասպոլում գտնվող «Մոլդովայի Հանրապետության Մերձդնեստրիայի տարածաշրջանում ռուսական զորքի օպերատիվ խմբի» շտաբում: Դիմողների հարցաքննությունից բացի, դատավորները հարցաքննել են մոլդովացի քաղաքական գործիչների ու պաշտոնյաների, Տիրասպոլում գտնվող բանտի վարչակազմի ներկայացուցիչների և ռուսական բանակի սպաների²⁷: Սակայն, *Յու Ջորդանը ընդդեմ Միացյալ Թագավորության (Hugh Jordan v UK)* գործով²⁸ Դատարանը հրաժարվեց փաստահավաք լսում անցկացնել, քանի որ ներպետական վարույթները (քաղաքացիական հայց և հետաքննություն) դեռ չէին ավարտվել: Դատարանը տարբերակեց այդ գործը Թուրքիայի դեմ բերված գործերից, որոնցում նա փաստահավաք լսումներ էր իրականացրել, չնայած ներպետական վարույթները դեռևս ընթացքի մեջ էին գտնվում²⁹, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Թուրքիայի դեպքում խնդրո առարկա վարույթները քրեական էին և ընդհատվել էին առաջին ատյանում, իսկ դիմողների փաստարկների զգալի մասը վերաբերվում էր հետաքննության ընթացքում տեղ գտած լուրջ թերություններին, որոնք այնպիսի բնույթ ունեին, որ ամբողջ քրեական վարույթը դարձնում էին անարդյունավետ³⁰:

Կասկած չկա, որ փաստահավաք լսումները և դեպքի վայրում իրականացվող հետաքննությունը կարող են չափազանց կարևոր ազդեցություն ունենալ Դատարանին ավելի վաղ ներկայացված ապացույցների գնահատման, ինչպես նաև ապահովել լրացուցիչ ծանրակշիռ ապացույցներ: *Պիրսն ընդդեմ Հունաստանի (Peers v Greece)* գործում³¹ Հանձնաժողովի պատվիրակները հարցաքննել էին դիմողին և երեք վկաների (մեկ կալանավորի և բանտի երկու աշխատակցի) Կորիդալլոս բանտում: Նրանք ստուգել էին բանտի մեկուսարանը, որի ընդհանուր մթնոլորտը գնահատել էին «գարշելի», և դիմողի խուցը համեմատել «միջնադարյան զնդանի» հետ³²:

Դատարանն իր մտահոգությունը հայտնեց այն հանգամանքի կապակցությամբ, որ անխուսափելիորեն բավական ժամանակ է անցնում դեպքը տեղի ունենալու և փաստահավաք գործունեություն իրականացնելու միջև: Օրինակ, *Իփեկն ընդդեմ Թուրքիայի (Ipek v Turkey)* գործում³³ Դատարանը մատնանշել է, որ «իրադարձությունների վաղեմությունը ազդում է դեպքերը մանրամասնություններով և ճշգրիտ հիշելու վկայի ունակության վրա ... Պատվիրակներին ցուցնում ենք տվող վկաներին խնդրել էին մտաբերել շատ տարիներ առաջ պատահած իրադարձությունները»:

Դատարանը նաև նշել է, որ փաստահավաք լսումներ անցկացնելու մասին իր որոշման վրա կարող է ազդել քննարկվող իրադարձության պահից անցած ժամանակը: Օրինակ, *Թանլին ընդդեմ Թուրքիայի (Tanli v Turkey)* գործում Դատարանը նշել է, որ դիմողի որդու մահվան պահից (1994 թվականից) անցած երկարատև ժամանակամիջոցը որոշման վրա ազդող գործոն է հանդիսացել այն մասով, որ գործի հանգամանքների հետաքննությունը չէր կարող օգնել

²⁴ Տես նաև՝ *Յոյլերը ընդդեմ Թուրքիայի (Yöyler v Turkey)* գործը, թիվ 26973/95, 24.7.03; *Իփեկը ընդդեմ Թուրքիայի (Ipek v Turkey)* գործը, թիվ 25760/94, 17.2.04; *Թանիսը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Taniş and Others v Turkey)* գործը, թիվ 65899/01: Եվրոպական դատարանի մամլո հաղորդագրություն, 30.4.03:

²⁵ *Վալաշինասը ընդդեմ Լիտվայի (Valasinas v Lithuania)*, գործը, թիվ 44558/98, 24.7.01:

²⁶ *Իլիաշկուն, Լեսկուն, Իվանտոսը և Պետրով-Պոպան ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի (Ilascu, Lesco, Ivantos and Petrov-Popa v Moldova and Russia)*, գործը, թիվ 48787/99, որոշում. 4.7.01:

²⁷ Եվրոպական դատարանի մամլո հաղորդագրությունը, 18.3.03:

²⁸ Թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHRR 2:

²⁹ Տես, օրինակ, *Սալմանն ընդդեմ Թուրքիայի (Salman v Turkey)*, թիվ 21986/93, 27.6.00, (2002) 34 EHRR 17:

³⁰ Թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHRR 2, կետ 111:

³¹ Թիվ 28524/95, 19.4.01, (2001) 33 EHRR 51:

³² Նույն տեղում, կետ 53:

³³ Թիվ 25760/94, 17.2.04, կետ 116:

հարցերի պարզաբանմանը³⁴: Իհարկե, այդպիսի հիմնավորման մեջ դիմողների շահերին վնաս պատճառելու վտանգ կա՝ նրանք, ըստ էության, կարող են տուժել իրենց գործերի քննությունը ձգձգելու պատճառով, ինչն իրենց վերահսկողությունից դուրս է և բացարձակապես արդյունք է բուն Դատարանի համակարգում գործերի անընդունելի մեծ կուտակումների: *Թանլիի* գործում, որը վերաբերում էր անվտանգության ծառայությունների կողմից ազատագրված դիմողի որդու մահվան հետ, փաստահավաք լսում չանցկացնելու որոշումը, հավանաբար, էական վնաս չի հասցրել դիմողի շահերին, քանզի Դատարանը, 2-րդ հոդվածի համաձայն, պետությանն այդ մահվան մեջ մեղավոր ճանաչեց, քանի որ կառավարությունը արժանահավատ որևէ բացատրություն չէր ներկայացրել: Սակայն կալանքի տակ գտնվելու ընթացքում վատ վերաբերմունքի ենթադրյալ զոհերին վերաբերող այլ գործերում, որտեղ հնարավոր չէ ապացուցման պարտականության մասն փոխանցումը, ձգձգումներով հիմնավորված փաստահավաք լսումներ չիրականացնելու որոշումը, կարող է չափազանց վնասաբեր լինել դիմողների կողմից իրենց պնդումներն առանց ողջամիտ կասկածի, որը Դատարանի պահանջն է, ապացուցելու ջանքերի համար³⁵:

Հանգամանքներից մեկը, որն անկասկած նվազեցնում է փաստահավաք լսումների արդյունավետությունը, այն է, որ բացակայում են լծակներ, որոնց միջոցով հնարավոր է ստիպել վկային ներկայանալու և Դատարանին ցուցմունքներ տալու: Այդ հիմնախնդիրը հիշատակվել էր *Դենիզչին և այլոք ընդդեմ Կիպրոսի (Denizci and others v Cyprus)* գործում, որտեղ ցուցմունքներ տալու համար հրավիրված 28 վկաներից չէին ներկայացել հինգը³⁶: *Իփեկն ընդդեմ Թուրքիայի (Ipek v Turkey)* գործում³⁷, որն առնչվում է դիմողի երկու որդիների «անհետացմանը», Դատարանը քննադատեց կառավարության կողմից հրավիրված երկու վկաների չներկայանալը: Այն օրը, երբ գյուղական *մուխթարը* պետք է ցուցմունք տար, Դատարանի պատվիրակներին հայտնեցին, որ նա հրաժարվել էր ցուցմունքներ տալուց: Այդ ժամանակ Դատարանը կառավարությանը խնդրեց նրանից երդմամբ հաստատված գրավոր հայտարարություն վերցնել առ այն, որ նա իր սեփական կամքով հրաժարվում է ցուցմունքներ տալուց: Իր գրավոր հայտարարության մեջ նա նշեց, թե չի ներկայացել, քանի որ ոչինչ չգիտեր քննվող միջադեպի մասին, ինչը, Դատարանի կարծիքով, չի արդարացնում ցուցմունքներ տալուց նրա հրաժարվելը: *Նուրայ Սենն ընդդեմ Թուրքիայի №2 (Nuray Sen v Turkey (№2))* գործով³⁸ Հանձնաժողովի պատվիրակներին ցուցմունքներ տալուց դատախազներից մեկի հրաժարվելը Դատարանի «խիստ քննադատությանն» արժանացավ:

Այուամենայնիվ, Դատարանի պատվիրակությանը ցուցմունքներ տալուց առանցքային վկայի հրաժարվելը կարող է հիմք տալ Դատարանին գործի փաստերի վերաբերյալ որոշակի եզրահանգումներ անել, այդ ապացույցի բացակայության պայմաններում: Օրինակ, *Էլչին և այլոք ընդդեմ Թուրքիայի (Elçi and Others v Turkey)* գործում³⁹, որն առնչվում է կալանքի տակ իրավաբան-դիմողներին պահելուն և նրանց նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելուն, մի քանի դատախազներ ցուցմունքներ էին տվել, որոնցից հետևում էր, որ վերջին հաշվով գլխավոր դատախազն էր պատասխանատու դիմողների ձերբակալման համար: Դատարանը, սակայն, նշեց, որ գլխավոր դատախազը ցուցմունքներ չի տվել, և կառավարությունը նույնիսկ չի էլ առաջարկել լսել նրան որպես վկայի⁴⁰: Համապատասխանաբար, Դատարանը գտավ, որ կալանավորման նախնական սանկցիայի տրման հանգամանքները ամբողջովին պարզ չեն և ինչը հիմք հանդիսացավ Դատարանի համար Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում արձանագրելու համար: Կառավարության կողմից առանցքային վկաներին չհրավիրելը կարող է հիմք հանդիսանալ արձանագրելու, որ Կառավարությունը չի կատարել Կոնվենցիայի հոդված 38(1)(ա)-ով նախատեսված իր պարտավորությունները, այն է՝ Դատարանի համար ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները հետաքննության իր առաքելությունն իրականացնելու համար

³⁴ Թիվ 26129/95, 10.4.01, (2003) 38 EHRR 3, կետ 7:

³⁵ Տե՛ս նաև՝ Erdal, U., 'Burden and Standard of proof in Proceedings under the European Convention' (2001) 26 *EL Rev. Human Rights Survey*, 68:

³⁶ Թիվ 25316 և թիվ 25321/94 և թիվ 27207/95, 23.5.01, կետ 315: Տե՛ս նաև, օրինակ, *Աքտաշն ընդդեմ Թուրքիայի (Aktas v Turkey)*, գործը, թիվ 24351/94, 24.4.03, (2004) 38 EHRR 18:

³⁷ Թիվ 25760/94, 17.2.04, կետ 116:

³⁸ Թիվ 25354/94, 30.3.04, կետ 156:

³⁹ Թիվ 23145/93 և թիվ 25091/94, 13.11.03:

⁴⁰ Նույն տեղում, կետ 680:

և Դատարանի համար որոշակի եզրահանգումներ անելու հիմք հանդիսանալ (ավելի մանրամասն տես, ստորև՝ 6.22.1):

3.1.2 Փաստահավաք լսումներ: Ընթացակարգը

Բացառիկ դեպքերում, եթե դիմողն անհրաժեշտ է համարում Դատարանի կողմից փաստահավաք լսումների անցկացումը, դիմողի ներկայացուցիչը պետք է Դատարան դիմի գանգատն ընդունելի հայտարարելուց հետո հնարավորինս արագ և շարադրի այն պատճառները, թե ինչու է դիմողը կարծում որ Դատարանը պետք է հարցաքննի վկաներին: Օգտակար կարող է լինել նաև այդ փուլում Դատարանին ուղարկել առաջարկվող վկաների ցուցակը: Այս ցուցակը պետք է ներառի ոչ միայն այն վկաներին, ովքեր կարող են հաստատել դեպքերի վերաբերյալ դիմողի վարկածը, այլև կախված գործի հանգամանքներից՝ «պետական վկաներին», այն է՝ դատախազներ, ոստիկանության աշխատակիցներ ու բանտի ծառայողներ: Պատասխանող պետությունը հաճախ վկաների նվազագույն ցուցակ է առաջարկում, որում կարող են նույնիսկ չհայտնվել «պետական» առանցքային վկաները, եթե կառավարությունը գերադասում է չհարցաքննել նրանց: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ դիմողի ներկայացուցիչը կազմի պետական վկաների ամբողջական ցուցակը: Եթե կոնկրետ պաշտոնատար անձի անունը հայտնի չէ, ապա նրանց, իհարկե, կարելի է Դատարանին ներկայացնել ըստ իրենց պաշտոնի կամ կոչման (օրինակ, այս կամ այն քաղաքի դատախազը): Անհրաժեշտ է կազմել յուրաքանչյուր վկայի ակնկալվելիք ցուցմունքների համառոտ շարադրանքը (եթե դուք արդեն ունեք վկաների հայտարարությունները) կամ, ծայրահեղ դեպքում, այն հարցերի շրջանակը, որոնք ենթադրվում է, որ նա կպարզաբանի (եթե չկան վկաների հայտարարությունները): Այդպիսի ցուցակի ներկայացնելով դիմողի ներկայացուցիչը փորձ է կատարում Դատարանին ապացուցել, որ այդ լսումները խիստ օգտակար կլինեն Դատարանին իր վճիռը կայացնելիս: Դիմողի ներկայացուցիչներին խորհուրդ է տրվում ցույց տալ, որ առկա են առանցքային վկաներ, ովքեր պատրաստ են ցուցմունքներ տալ, և որ այդ ցուցմունքները կարևոր կլինեն Կոնվենցիայի խախտում հաստատելու համար: Օրինակ, մահվան դեպքերին առնչվող գործերում, որոնցում դիմողը մեղադրում է պաշտոնատար անձանց, Դատարանը կարող է որոշել փաստահավաք լսում անցկացնել, եթե գտնում է, որ կա ողջամիտ հնարավորություն այդ ընթացակարգի միջոցով հաստատել՝ արդյոք, ըստ 2-րդ հոդվածի, զոհի մահվան համար պետությունը պատասխանատու է, թե ոչ: Սակայն, եթե, միակ հավանական ելքը լինելու է այն բանի հաստատումը, որ պետությունը պատշաճ կերպով չի հետաքննել մահվան հանգամանքները, ապա քիչ հավանական է, որ փաստահավաք լսումը տեղի կունենա:

Այնուհետև Դատարանը կողմերին տեղյակ է պահում ցուցմունքներ վերցնելու մասին իր որոշման վերաբերյալ (և հնարավոր է, որ նշանակի նախնական ժամկետներ): Դատարանը կարող է պահանջել, որպեսզի իրեն ներկայացվեն վկաների ենթադրվելիք ցուցմունքների համառոտագիրը, եթե դրանք նախապես ներկայացված չեն եղել: Քննարկելով կողմերի առաջարկությունները այն վկաների մասով, որոնց անհրաժեշտ է կանչել, Դատարանը կազմում է վկաների նախնական ցուցակը: Դատարանը կարող է նաև կողմերի ներկայացուցիչներին խնդրել Ստրասբուրգում հաճախել նախնական նիստին՝ վկաների ցուցակի վերջնական համաձայնեցման նպատակով (Կանոն Ա4(2)): Այդ նիստը սովորաբար անց է կացվում երեք դատավորների կազմով, որոնք հետագայում իրականացնելու են նաև գործի լսումը (բաժանմունքի քարտուղարի և իրավաբանների ներկայությամբ): Նախնական նիստում կողմերից կպահանջվի հաստատել, որ վկաները դեռ պատրաստ և ի վիճակի են մասնակցել փաստահավաք լսմանը. բացի դրանից, նրանց կարող են հարցեր տալ վկաների՝ տրվելիք ցուցմունքների բովանդակության մասին:

Այնուհետև Դատարանը տրամադրում է նիստերի նախնական ժամանակացույցը և վկաների իր ցուցակը, ինչպես նաև ժանուցագրերը, որոնք կողմերը պետք է հանձնեն վկաներին: Դատարանը թարգմանիչներ է տրամադրում ազգային լեզվից անգլերեն և/կամ ֆրանսերեն և հակառակը թարգմանելու համար: Եթե վկաները ցուցմունքներ են տալու ոչ պետական լեզվով, ապա հարկավոր է Դատարանին այդ մասին տեղեկացնել նախօրոք (օրինակ, Թուրքիայում որոշ վկաներ փաստահավաք լսումների ընթացքում ցուցմունքներ էին տվել քրդերեն): Դատարանը կպահանջի ներկայացնել ծանուցված վկաններից որևէ մեկի չներկայանալու պատճառները: Լսումները սովորաբար անցկացվում են երեք դատավորների կազմով՝ բաժանմունքի Քարտուղարի ու Դատարանի Քարտուղարության իրավաբանի

ներկայությամբ: Լսումը նախագահում է երեք դատավորներից կազմված պատվիրակության ղեկավարը: Վկաների հարցաքննությունը կարող է իրականացնել ինչպես նախագահողը, այնպես էլ մյուս դատավորները: «Դիմողի վկաներին» հարցաքննելիս դատավորներից հետո հարցեր տալու հնարավորությունը տրվում է դիմողի ներկայացուցչին, իսկ հետո՝ կառավարությանը («պետական վկային» հարցաքննելիս կառավարությունն է նախորդում դիմողին): Սակայն Դատարանի պատվիրակությունները հաճախ հետևում են տարբեր ընթացակարգերի. նրանցից ոմանք վկաներին հանգամանորեն հարցաքննում են՝ նախքան կողմերի ներկայացուցիչներին այդպիսի հնարավորություն տրվելը, ոմանք՝ ոչ: Համապատասխանաբար, խորհուրդ է տրվում, որ ներկայացուցիչները պատրաստ լինեն, յուրաքանչյուր վկայի ամբողջական հարցաքննությանը, եթե պահանջվի: Դատարանը սովորաբար «փաստաթղթերի հիմնական փաթեթ» չի պատրաստում և չի պահանջում կողմերից դա անել: Դա կարող է դժվարություններ ստեղծել, եթե վկաները ցանկանան ծանոթանալ որոշակի փաստաթղթերի, և կարծիք կա, որ Դատարանը պետք է վերանայի այդ պրակտիկան: Կողմերի համար օգտակար կարող է լսումից առաջ փորձել Դատարանի հետ համաձայնեցնել փաստաթղթերի ցանկը:

Կողմերի ներկայացուցիչները պետք է նախապես քննարկեն ապացույցների որոշակի տեսակների ներկայացման եղանակը՝ այնպիսի ապացույցների, ինչպիսիք են քարտեզները, լուսանկարները և տեսանյութերը: Դատարանին պետք է նախապես իրազեկել հատուկ հարմարությունների, օրինակ՝ տեսաֆիլմեր ցուցադրելու համար տեխնիկական միջոցների անհրաժեշտության մասին: Այսպես, *Յոյլերը ընդդեմ Թուրքիայի (Yöyler v Turkey)* գործում⁴¹, որը վերաբերում է գյուղի վրա անվտանգության ուժերի հարձակմանը, դիմողը նախօրոք խնդրել էր տրամադրել դիապրոյեկտոր՝ ցուցադրելու համար սեփական ձեռքով նկարած իր գյուղի քարտեզը, որը հետագայում վկաներն օգտագործեցին այրված տները ցույց տալու համար:

Դիմողի ներկայացուցիչները պետք է պատրաստ լինեն պատասխանող կառավարության կողմից լրացուցիչ փաստաթղթերի հրապարակմանը միստից անմիջապես առաջ, դրա ընթացքում կան հետո: Այդ գործելակերպը բավականին տարածված է, չնայած որ բոլոր փաստաթղթերը պետք է հրապարակված լինեն մինչև լսումը: Կողմերի ներկայացուցիչները պետք է պատրաստ լինեն միջնորդելու «նոր» փաստաթղթերի հրապարակման մասին, որոնք վկաները կմատնանշեն միստի ընթացքում:

Փաստահավաք լսումից հետո Դատարանը կողմերին է փոխանցում լսումների արձանագրությունը՝ ստուգելու և ուղղումներ առաջարկելու համար (Կանոն Ա8): Դատարանը կարող է բանավոր ցուցմունքներից բխող նոր փաստաթղթային ապացույցներ պահանջել կողմերից:

3.2 ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Բարեկամական կարգավորման ընթացակարգը (37-39 հոդվածներ և Կանոն 62) պատասխանող պետությանը և դիմողին հնարավորություն է ընձեռում լուծել վեճը: Դատարանը դիմում է կողմերին՝ բարեկամական կարգավորման առնչությամբ առաջարկներ ներկայացնելու խնդրանքով: Բարեկամական կարգավորման դեպքում գանգատը հանվում է Դատարանի գործերի ցուցակից, ինչը կարող է տեղի ունենալ գանգատի քննության ցանկացած փուլում (հոդված 37, կետ 1):

Ընդունելիության մասին որոշում կայացնելուց հետո Դատարանը կողմերին հայտնում է, որ իր ծառայությունն է տրամադրում բարեկամական կարգավորում կնքելու նպատակով, և առաջարկում է կողմերին ներկայացնել իրենց առաջարկությունները (հոդված 38 կետ 1 (b) և Կանոն 62): Գործնականում այդպիսի առաջարկությունը ներառվում է Դատարանի նամակում, որը կցվում է ընդունելիության մասին որոշմանը: Դատարանը սովորաբար առաջարկություններ ներկայացնելու համար ժամկետ է սահմանում, որը, սակայն, կարող է երկարաձգվել (Դատարանը շահագրգռված է գործերի բարեկամական կարգավորմամբ և հավանաբար լրացուցիչ ժամանակ կտրամադրի, եթե համաձայնության հասնելու հնարավորությունն իրական է թվում):

Նախքան Թիվ 11 Արձանագրություն ուժի մեջ մտնելը, Եվրոպական հանձնաժողովը խրախուսում էր բարեկամական կարգավորման գործընթացը՝ կոնֆիդենցիալ կարգով

⁴¹ Թիվ 26973/95, 24.7.03:

հայտնելով Հանձնաժողովի նախնական տեսակետն առ այն, թե արդյոք եղել է Կոնվենցիայի խախտում: Սակայն նոր Դատարանը չչարունակեց այդ պրակտիկան:

Բարեկամական կարգավորման ընթացակարգում Դատարանն, ըստ էության, «փոստարկղի» դեր է կատարում: Եթե կողմերից որևէ մեկն առաջարկություններ է ներկայացնում, դրանք մեկնաբանությունների համար ուղարկվում են մյուս կողմին: Սակայն առաջարկությունների բացակայության դեպքում Դատարանը սովորաբար հետագա քայլեր չի ձեռնարկում բարեկամական կարգավորման օժանդակելու համար: Միայն շատ բացառիկ դեպքերում է Դատարանն առավել ակտիվորեն օժանդակում բարեկամական կարգավորման ձեռք բերմանը: Օրինակ, այն դեպքերում երբ ֆինանսական բանակցությունները դժվարությունների են հանդիպում, Դատարանը, գործի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով, կարող է ողջամիտ թվացող գումար առաջարկել: Կանոն 62-ը Դատարանին թույլ է տալիս ձեռնարկել բարեկամական կարգավորման ապահովմանն օժանդակելու համար անհրաժեշտ թվացող ցանկացած քայլ, այդ թվում կողմերի հանդիպման կազմակերպումը: Օրինակ, *Քյոկսալը ընդդեմ Նիդեռլանդների (Köksal v Netherlands)* գործում⁴², որն վերաբերում էր կալանքի տակ գտնվող դիմողի հոր և որդու ենթադրյալ խոշտանգումներին ու մահվանը, Դատարանի քարտուղարությունը կողմերի հանդիպում էր կազմակերպել Հաագայում: Գործի բարեկամական կարգավորումը ձեռք բերվեց 140 հազար նիդեռլանդական գուլդենի վճարմամբ և Նիդեռլանդների կառավարության կողմից մահվան կապակցությամբ «խորին ավստսանք» հայտնելով, թեպետ վերջինս միաժամանակ նշել էր, թե այդ հայտարարությունը «չի նշանակում, որ Նիդեռլանդների կառավարությունն ընդունում է իր կողմից Սարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան խախտելու հանգամանքը»⁴³:

Բարեկամական կարգավորում ձեռք բերելու մասին բանակցությունները կոնֆիդենցիալ բնույթ ունեն և վեճը քննելու ժամանակ չեն կարող ազդել կողմերի փաստարկների վրա (Կանոն 62, կետ 2): Գործը ըստ էության քննելիս չի կարելի վկայակոչել բանակցությունների մանրամասնությունները և հիմնվել դրանց վրա: Բարեկամական կարգավորման ձեռք բերման ընթացակարգը պատասխանող պետության համար կարող է հնարավորություն հանդիսանալ ավարտելու այն գործերը, որոնք, նրա կարծիքով, քննությունը շարունակելու դեպքում կարող հաջող ելք ունենալ դիմողի համար: Կառավարությունը կարող է ցանկանալ այն գործի բարեկամական կարգավորումը, որում կոնկրետ խնդիր էր հայտնաբերվել (գործի հարուցման հետևանքով կամ նույնիսկ գանգատ ներկայացնելուց առաջ), որն արդեն լուծվել է կամ գտնվում է լուծման ընթացքում: Եթե կառավարությունն առաջարկում է վերանայել կոնկրետ ընթացակարգը կամ նոր օրենսդրություն ընդունել գանգատում Կոնվենցիայի հիման վրա բարձրացված հիմնախնդիրը լուծելու նպատակով, ապա, հնարավոր է, որ կցանկանա բարեկամական կարգավորում կնքել և այդպիսով խուսափելով Դատարանի կողմից Կոնվենցիայի խախտում արձանագրելուց: Կառավարությունը կարող է պատրաստ լինել բարեկամական կարգավորման ձեռք բերման նպատակով դիմողին առաջարկելու որոշակի գումար և հատուցելու նրա ծախսերը՝ ի լրումն կոնկրետ ընթացակարգը վերանայելուն կամ նոր օրենսդրություն ընդունելուն: Առավել խնդրահարույց դեպքերում պետությունները կփորձեն «փրկագին» վճարելով անհատ դիմողներին խուսափել Կոնվենցիայի ակնհայտ խախտումների ընդունումից: Անշուշտ, եթե դիմողը պատրաստ է բավարարվել որոշակի գումար ստանալով, ուրեմն գործը կարող է կարգավորվել առանց կառավարության կողմից կոնկրետ ընթացակարգը վերանայելուն կամ նոր օրենսդրություն ընդունելուն ուղղված որևէ փորձ ձեռնարկելու:

Բարեկամական կարգավորումը դիմողին հնարավորություն կընձեռի ավելին ձեռք բերել, քան կարելի էր ստանալ Դատարանի բուն որոշումից (անկախ խախտումը ճանաչելու հանգամանքից): Թեպետ Դատարանի վճիռը դիմողի համար կարող է խախտման արձանագրում և «արդարացի փոխհատուցման» տրամադրում նշանակել (տե՛ս Գլուխ 9-ը), կարևոր է հիշել, որ որպես *բարեկամական կարգավորման* պայման դիմողը իհարկե կարող է նաև փորձել բանակցությունների միջոցով հասնել ցանկացած տեսակի հատուցման, ներառյալ ստանալ փոխհատուցում և իր կատարած ծախսերի հատուցում, ինչպես նաև կառավարությունից ստանալ խոստում՝ վերանայել իր պրակտիկան կամ քաղաքականությունը կամ ընդունել նոր օրենսդրություն: Բարեկամական կարգավորումը կարող է նաև պարունակել սահմանված ժամկետում կառավարության կողմից որոշ միջոցներ ձեռնարկելու պահանջ, այդ դեպքում

⁴² Թիվ 31725/96, 20.3.01:

⁴³ Նույն տեղում, կետ 14:

դիմողը կարող է հատուցում ստանալ շատ ավելի վաղ, քան այն դեպքում, երբ գործի քննությունը շարունակվեր և Դատարանը վճիռ կայացներ: Բարեկամական կարգավորման շրջանակներում կառավարությունը կարող է պատրաստական լինել ավելի բարձր փոխհատուցում և ծախսերի հատուցում վճարել, քան հավանաբար կնշանակվի Դատարանի կողմից: Սակայն առանձին դիմողների համար Դատարանի որոշումը հոգուտ իրենց կարող է ինքնին շատ կարևոր լինել և նրանց հետ պահել բարեկամական կարգավորումից:

Դատարանը պատրաստականությամբ է օժանդակում բարեկամական կարգավորման ապահովմանը, քանի որ դա նշանակում է Դատարանում գործերի կուտակումների նշանակալի նվազում: Բարեկամական կարգավորման պայմանները համաձայնեցնելով՝ երկու կողմերը պետք է գրեն Դատարանին, հաստատեն բարեկամական կարգավորման պայմանները և Դատարանին խնդրեն ցուցակից հանել գործը: Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում կամ վճիռ (եթե բարեկամական կարգավորումը կնքվել է գանգատն ընդունելի հայտարարվելուց հետո), որում տրվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքը (հոդված 39): Այդպիսով, բարեկամական կարգավորումներն այժմ ավելի «տեսանելի են» են, քան մինչև Թիվ 11 Արձանագրության ուժի մեջ մտնելը: Դա ինքնին կարող է կարևոր հանգամանք լինել բարեկամական կարգավորման շուրջ բանակցությունների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելիս:

Սակայն բարեկամական կարգավորում ձեռք բերելու հարցում Դատարանի դերը չի սահմանափակվում սուկ որոշումը «վավերացնելով»: Կոնվենցիայի 37-րդ հոդված 1-ին կետի համաձայն, գործը ցուցակից հանելու ընթացքում, Դատարանը կարող է շարունակել գանգատի քննությունը «եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված՝ մարդու իրավունքների հարգումը»: Այդ որոշման վրա ազդող գործոնների թվին են դասվում գանգատում բարձրացված հարցի կարևորությունը, բարեկամական կարգավորման՝ կողմերի առաջարկած պայմանները, և այն, թե ավելի վաղ քննվել է արդյոք տվյալ հարցը Դատարանի կողմից:

Թիվ 14 Արձանագրությամբ առաջարկված փոփոխությունները. Բարեկամական կարգավորում

Եթե ներկայումս Դատարանը բարեկամական կարգավորման ապահովման գործընթացը ձեռնարկում է գանգատն ընդունելի հայտարարվելուց հետո, ապա, համաձայն Կոնվենցիայի Թիվ 14 Արձանագրության (տե՛ս վերը՝ 1.2.2-ը), Կոնվենցիայի 39 հոդվածում փոփոխություններ կկատարվեն, որոնք պարզորոշ կերպով կամրագրեն, որ բարեկամական կարգավորում կարող է ձեռք բերվել «քննության ցանկացած փուլում» (Թիվ 14 Արձանագրության 15-րդ հոդված, որի հիման վրա փոփոխվում է Կոնվենցիայի 39-րդ հոդվածը):

Ինչպես վերը բացատրվեց, գործերի բարեկամական կարգավորումները կարող են դիմողների համար շատ ձեռնտու պայմաններով կնքվել ոչ միայն փոխհատուցում ստանալու, այլև օրենսդրությունում և/կամ իրավակիրառական պրակտիկայում էական փոփոխություններ կատարելու առումով: Այդպիսի բարեկամական կարգավորումների որոշ օրինակներ կբերվեն ստորև.

Դանիան ընդդեմ Թուրքիայի (Denmark v Turkey)⁴⁴ գործը.

Դիմող պետությունը հատուցում էր պահանջում ոստիկանության կողմից իր քաղաքացուն ենթադրաբար խոշտանգելու համար: Գործի վերաբերյալ բարեկամական կարգավորում ձեռք բերվեց այն բանից հետո, երբ թուրքական կառավարությունը *ex gratia* (որպես բարի կամքի դրսևորում) որոշակի գումար վճարեց, հայտնեց իր ափսոսանքը (թեկուզև «եզակի ու ոչ մասսայական բնույթ կրող խոշտանգման դեպքերի» համար) և ստանձնեց մի շարք պարտավորություններ՝ ներառյալ այն, որ թուրքական ոստիկանությունը պետք է մասնակցի Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպվող վերապատրաստմանը, ինչպես նաև ոստիկանության համար Դանիայի կառավարության կողմից ֆինանսավորվող երկկողմ ուսումնական նախագծին, և համաձայնություն տվեց համագործակցել խոշտանգումների

⁴⁴ Թիվ 34382/97, 5.4.00:

կանխարգելման Կոմիտեի (ԽԿԵԿ) հետ: Բարեկամական կարգավորման մեջ նշվել էին նաև Թուրքիայի քրեական օրենսգրքի փոփոխությունները՝ ուղղված խոշտանգումների և դաժան վերաբերմունքի վերաորակավորմանն ու սահմանափակմանը: Այդ պայմաններին հղում է արվել բարեկամական կարգավորման միջոցով լուծված հետագա բազմաթիվ գործերում⁴⁵:

Ստեֆանովը ընդդեմ Բուլղարիայի (Stefanov v Bulgaria)⁴⁶ գործը.

Այս գործը վերաբերում է բուլղարական բանակում ծառայելուց հրաժարվելու համար Եհովայի վկա դիմողի դատապարտմանը, ինչը, նրա պնդմամբ, 9 հոդվածով երաշխավորված իր՝ խղճի և կրոնի ազատության իրավունքների խախտում էր: Գործը լուծվել էր բարեկամական կարգավորման միջոցով՝ հետևյալ պայմաններով.

ա) պետք է կարճվեն կամ վերացվեն կրոնական պատկանելության նկատառումներով զինվորական ծառայությունից հրաժարվող, բայց միևնույն ժամանակ այլընտրանքային քաղաքացիական ծառայություն անցնել ցանկացող Բուլղարիայի քաղաքացիների վերաբերյալ բոլոր քրեական վարույթները ու դատավճիռները, սկսած 1991 թվականից (մասնավորապես, բայց ոչ միայն պարոն Ի. Ս.-ի և այլ գործերով երեք այլ դիմողների մասով), և այդ գործերով կիրառված բոլոր պատիժները և/կամ սահմանափակումները պետք է վերացվեն, այնպես ինչպես եթե այդ քաղաքացիները երբևէ մեղավոր ճանաչված չլինեին օրենքը խախտելու մեջ; և այդպիսով, Բուլղարիայի Հանրապետության Նախարարների խորհուրդը պարտավորվում է Ազգային ժողովին ներկայացնել այդօրինակ գործերով լիակատար համաներման մասին օրինագիծ,

բ) Բուլղարիայում այլընտրանքային քաղաքացիական ծառայությունը պետք է անցնի քաղաքացիական ղեկավարության ներքո, ռազմական իշխանությունները չպետք է դրա հետ որևէ առնչություն ունենան, և այլընտրանքային ծառայության ժամկետը պետք է իր տևողությամբ հավասար լինի այդ պահին գործող զինվորական ծառայության մասին օրենքով նախատեսված պարտադիր զինվորական ծառայության ժամկետին,

գ) կրոնական համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվողները, Բուլղարիայի մյուս բոլոր քաղաքացիների հետ հավասար, իրավունք ունեն վերը նշված քաղաքացիական ծառայությունից ազատ օրերին ու ժամերին, միանձնյա կամ այլոց հետ համատեղ, առանց պատասխանատվության ենթարկվելու վտանգի, կամ այլ սահմանափակման կամ խոչնդոտի, օգտվել իրենց կրոնական համոզմունքները արտահայտելու իրավունքից:⁴⁷

Կրոկն ընդդեմ Իռլանդիայի (Croke v Ireland)⁴⁸ գործը.

Այս գործը վերաբերում էր հոգեբուժական հաստատությունում պահելու օրինականության հարցը քննող անկախ և ավտոմատ ընթացակարգի բացակայությանը: Բարեկամական կարգավորումը կնքվել էր գումարի, որի չափը չէր հրապարակվել, վճարման պայմանով և Իռլանդիայի կառավարության կողմից հոգեկան առողջության մասին 1999-թ. օրենքը գործողության մեջ դնելու իր մտադրության մասին հայտարարություն անելուց հետո:

Ֆրանսիական քահանաների ինստիտուտը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Institute of French Priests and others v Turkey)⁴⁹ գործը.

Այս գործում դիմող Ինստիտուտը, գանգատ էր ներկայացրել իրեն պատկանող հողակտորը պետական տարբեր մարմինների անունով գրանցելու՝ ազգային դատարանների որոշման կապակցությամբ: Գործի կապակցությամբ բերականական կարգավորում ձեռք բերվեց այն հիմքով, որ պետությունը պարտավորվեց ճանաչել հողակտորի նկատմամբ ինստիտուտը ներկայացնող քահանաների անժամկետ վարձակալության իրավունքը, պայմանով, որ դրա համար վճարվի ողջամիտ հարկ այն վարձավճարից, որը ստացվում է հողի վարձակալությունից:

⁴⁵ Տե՛ս, օրինակ, *Ուլքու Դոդանը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ulku Dogan and others v Turkey)*, գործը, թիվ 32270 / 96, 19.6.03:

⁴⁶ Թիվ 32438 / 96, 3.5.01:

⁴⁷ Նույն տեղում, կետ 14:

⁴⁸ Թիվ 33267 / 96, 21.12.00:

⁴⁹ Թիվ 26308 / 95, 14.12.00:

Վարեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Varey v UK)⁵⁰ գործը.

Այս գործը վերաբերում էր գնչուական համայնքի նկատմամբ որոշ միջոցառումների ծրագրմանը և իրականացմանը, որոնք համայնքի անդամները խտրական էին համարում: Այդ գործի էությանը վերաբերող Հանձնաժողովի հաշվետվությունից հետո, որով 8-րդ հոդվածի խախտում էր արձանագրվել (26 ձայնով՝ ընդդեմ մեկի), գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում ձեռք բերվեց Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից, որպես փոխհատուցում, 60 հազար ֆունտ ստեռլինգի և իրավական ծախսերի համար՝ 15 հազար հինգ հարյուր ֆունտ ստեռլինգի վճարման պայմանով: Գանգատը հանվել էր գործերի ցուցակից՝ 37-րդ հոդվածի 1-ին կետի (b) ենթակետի համապատասխան վեճը կարգավորված լինելու հիմքով:

Սահլին ընդդեմ Բելգիայի (Sahli v Belgium)⁵¹ գործը.

Այս գործում դիմողը հոգեկան խանգարումով տառապող Ալժիրի քաղաքացի էր, որին սպառնում էր արտաքսում Բելգիայից, ուր նա ապրել էր իր կյանքի մեծ մասը: Գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում էր ձեռք բերվել վտարման մասին հրամանը վերացնելուց և դիմողին օտարերկրացու նոր վկայական հանձնելուց հետո, որը սկզբնապես ուժի մեջ է հինգ տարի և կարող էր երկարաձգվել:

Սազերլենդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sutherland v UK)⁵² գործը.

Այս գործը վերաբերում էր միասեռական հարաբերությունների համար թույլատրելի նվազագույն տարիքին, որն օրենքով սահմանված էր 18 և ոչ թե 16 տարեկանը, ինչը նախատեսված էր կանանց համար: Դիմողը պնդում էր, որ այդ իրավիճակը խախտում էր Կոնվենցիայի 14-րդ և 8-րդ հոդվածներով երաշխավորված իր իրավունքները: Նկատի ունենալով իրավունքի այդ ոլորտում կառավարության կողմից առաջարկված օրենսդրական փոփոխությունները, կողմերը Դատարանից լրացուցիչ ժամանակ ստացան իրենց հուշագրերը (գործի էության վերաբերյալ վերջնական գրավոր բացատրությունները) ներկայացնելու համար: Գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում էր ձեռք բերվել 2000 թվականի սեռական հանցագործությունների մասին Օրենքը 2001 թվականի հունվարի 8-ին նոր խմբագրությամբ ուժի մեջ մտնելու հիմքով, որով համահավասարեցվեց չափահասության տարիքը:

Ալի Էրոլն ընդդեմ Թուրքիայի (Ali Erol v Turkey)⁵³ գործը.

Դիմողը թերթի խմբագիր էր, ով քրեական հետապնդման էր ենթարկվել մարդկանց կրոնական կամ ռասայական ատելության կամ թշնամանքի դրդելն արգելող օրենսդրության հիման վրա: Այս և համանման գործերը⁵⁴ կարգավորելիս կառավարությունը ընդունել էր ներքին օրենսդրությունը Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը և պարտավորվել էր օրենքի մեջ փոփոխություններ մտցնել՝ համաձայն 2001 թվականի մարտի 24-ի «Ազգային ծրագրի» դրույթների: Ավելին, վնասի փոխհատուցում վճարելուց զատ՝ կառավարությունը համաձայնել էր կիրառել նույն «անհատական միջոցները», որոնք շարադրված էին Նախարարների կոմիտեի նախորդ Նախնական բանաձևում⁵⁵:

ԿԿՍ-ն ընդդեմ Նիդեռլանդների (KKC v Netherland)⁵⁶ գործը.

Այս գործը կարգավորելու համար Ռուսաստանի՝ ազգությամբ չեչեն քաղաքացուն, որին սպառնում էր վտարում Ռուսաստան, տրվեց անժամկետ կացության քարտ:

Ֆիլդինգն ընդդեմ Միացյալ Թագավորության (Fielding v UK)⁵⁷ գործը.

⁵⁰ Թիվ 26662/95, 21.12.00, (2000) 30 EHRR CD 39:

⁵¹ Թիվ 38707/97, 9.1.01:

⁵² Թիվ 25186/94, 20.6.02:

⁵³ Թիվ 35076/97, 20.6.02:

⁵⁴ Տե՛ս, օրինակ, *Ալթանը ընդդեմ Թուրքիայի (Altan v Turkey)*, գործը, թիվ 32985/96, 14.5.02, (2002) 34 EHRR 33:

⁵⁵ ResDH (2001) 106, 23.7.01:

⁵⁶ Թիվ 58964/00, 21.12.01:

⁵⁷ Թիվ 36940/97, 29.1.02: Տե՛ս նաև, օրինակ, *Ուիլիսը ընդդեմ Միացյալ Թագավորության (Willis v UK)*, գործը, թիվ 36042/97, 11.6.02:

Այս գործը վերաբերում էր այրիների սոցիալական արտոնություններ տրամադրելու հարցում խտրականության դրսևորմանը, քանի որ այդպիսի արտոնություններ չէին տրամադրվում իրենց կանանց կորցրած տղամարդկանց: Գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում ձեռք բերվեց 1999 թվականին Սոցիալական ապահովության և կենսաթոշակների բարեփոխումների մասին Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, համաձայն որի ամուսնուն կորցնելու դեպքում նպաստ տրվում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց: Դիմողին նաև վճարվեց 14.500 ֆունտ ստեռլինգ՝ այսինքն այն գումարը, որը նա որպես նպաստ կստանար, եթե կին լիներ:

Սուլեյմանովիչն ու այլք և Սեյդովիչն ու Սուլեյմանովիչը ընդդեմ Իտալիայի (Sulejmanovic and others and Sejdivic and Sulejmanovic v Italy)⁵⁸ գործը.

Այս գործով դիմողները գնչուներ էին, ովքեր 2000 թվականին, կեսգիշերին, զենքի կիրառման ենթադրյալ սպառնալիքի տակ, արտաքսվել էին Բոսնիա: Դիմողները Կոնվենցիայի հիման վրա տարբեր փաստարկներ էին առաջ քաշել, սակայն գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում ձեռք բերվեց այն բանից հետո, երբ կառավարությունը պարտավորվեց վերացնել արտաքսման մասին հրահագները, թույլ տալ դիմողներին՝ ընտանիքների հետ միասին մեկնել Իտալիա և թույլատրել երկրում մարդասիրական հիմունքներով նրանց բնակվելը: Կառավարությունը նաև պարտավորվեց մինչև մշտական բնակության վայր գտնելը տրամադրել ժամանակավոր կացարան, դպրոցահասակ երեխաներին հնարավորություն տրվեց հաճախելու դպրոց, իսկ երեխաներից մեկին՝ (որը տառապում էր Դաունի սինդրոմ)՝ ստանալ բժշկական օգնություն: Դիմողներից յուրաքանչյուրը նաև ստացավ փոխհատուցում՝ 7.746,90 եվրոյի չափով, իսկ բժշկական հսկողության կարիք ունեցող երեխան՝ 45.090,10 եվրո:

Բենզանը ընդդեմ Խորվաթիայի (Benzan v Croatia)⁵⁹ գործը.

Դիմողը 3 հողվածի հիման վրա բողոքում էր Լեպոգլավայի պետական բանտի պայմաններից, որտեղ ինքը պահվում էր: Գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում ձեռք բերվեց այն բանից հետո, երբ կառավարությունը պարտավորվեց որոշակի ժամանակաընթացքում վերանորոգել բանտի այն հատվածը, որտեղ պահվում էր դիմողը, և վճարել նրան 21 հազար եվրո փոխհատուցում:

Քինայը և Քինայը ընդդեմ Թուրքիայի (Kinay and Kinay v Turkey)⁶⁰ գործը.

Դիմողները բողոքում էին Թուրքիայի անվտանգության ուժերի կողմից 1994 թվականին իրենց տները հրկիզելու և իրենց գյուղից վտարելու կապակցությամբ: Գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում ձեռք բերվեց կառավարության հայտարարության հիման վրա, որում ասվում էր. «Կառավարությունը ափսոսանք է հայտնում հարավ-արևելյան Թուրքիայում պետության ներկայացուցիչների գործողությունների հետևանքով տների և գույքի ավերածությունների առանձին դեպքերի համար, որոնց հետևանքով քաղաքացիական բնակչությունը հարկադրված էին լքել իրենց գյուղերը, և իշխանությունների կողմից այդ դեպքերի հանգամանքների արդյունավետ հետաքննություն չանցկացնելու համար... [կառավարությունը] ընդունում է, որ դիմողների գործում հիշատակված նմանօրինակ գործողություններն ու բացթողումները հանգեցրել են Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների ու Թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտման, իսկ նկատի ունենալով ավերածությունների պատճառած հոգեկան տառապանքները նաև Կոնվենցիայի 3 հոդվածի խախտման»: Դիմողներին վճարվել էր 59 հազար եվրո:

Մաջիրն ընդդեմ Թուրքիայի (Macir v Turkey)⁶¹ գործը; *Գյուլերն ընդդեմ Թուրքիայի (Gbler v Turkey)⁶²* գործը.

Միմյանց հետ կապ չունեցող այս երկու գործերում դիմողները բողոքում էին Թուրքիայի անվտանգության ուժերի կողմից 1990-ական թվականների կեսին իրենց ազգականներին

⁵⁸ Թիվ 57574/00 և թիվ 57575/00, 8.11.02:

⁵⁹ Թիվ 62912/00, 8.11.02:

⁶⁰ Թիվ 31890/96, 26.11.02:

⁶¹ Թիվ 28516/95, 22.4.03:

⁶² Թիվ 46649/99, 22.4.03:

սպանելու կապակցությամբ: Երկու գործերի կապակցությամբ էլ բարեկամական կարգավորում էր ձեռք բերվել Թուրքիայի կառավարության կողմից ազգականներին 70 հազարական եվրոյի վճարելու, ափսոսանք հայտնելու և Կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածների խախտումներն ընդունելու մասին հայտարարություն անելու պայմանով: Թեպետ այլ գործերում դիմողները մերժել էին բարեկամական կարգավորման նմանօրինակ պայմանները՝ բավարար չհամարելով Թուրքիայի կառավարության հայտարարությունը (տե՛ս *Աքարն ընդդեմ Թուրքիայի (Acar v Turkey)* գործը, ստորև՝ 3.3.3-ում), ֆինանսական տեսակետից բարեկամական կարգավորման շրջանակներում առաջարկված գումարն անկասկած ավելի մեծ էր, քան Դատարանի կողմից շնորհված վնասի փոխհատուցումների մեծամասնության չափը:

*Ձ.Մ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (Z.M. v UK)*⁶³ գործը.

Գործը վերաբերում էր դիմողի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքին՝ տեղական իշխանությունների կողմից նրան մի ընտանիքի խնամակալությանը հանձնելուց հետո: Գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում էր ձեռք բերվել դիմողին 77 հազար ֆունտ ստեռլինգ վճարելու պայմանով:

*Նոթարն ընդդեմ Ռումինիայի (Notar v Romania)*⁶⁴ գործը.

Գործը վերաբերում էր 17-ամյա դիմողին ոստիկանության կողմից ձերբակալելուց հետո, ենթադրյալ վատ վերաբերմունքի ենթարկմանը: Գործի կապակցությամբ բարեկամական կարգավորում էր ձեռք բերվել դիմողին նյութական վնասի համար 40.875 եվրո, գումարած ծախսերի ու ծախքերի համար՝ 8.712,66 եվրո վճարելուց հետո: Ռումինիայի կառավարությունը ստանձնեց նաև տարբեր պարտավորություններ, այդ թվում՝ «շարունակել ջանքեր գործադրել կարիքի մեջ գտնվող երեխաների պաշտպանության ոլորտում ներպետական օրենսդրությամբ և ազգային ռազմավարական ծրագրերով իր ստանձնած պարտավորություններին համապատասխան (№108/ 1998 օրենքով հաստատված № 26 / 1997 կառավարության որոշումը՝ Կարիքի մեջ գտնվող երեխաների պաշտպանության մասին, և կառավարության 2001 թվականի հունիսի 7-ի № 539 որոշումը՝ Կարիքի մեջ գտնվող երեխաների պաշտպանության ռազմավարական ծրագրի մասին), որոնք ամբողջությամբ փոփոխում են խնդրո առարկա դեպքերի ժամանակ գործողության մեջ գտնված օրենսդրությունը»:

3.3. ԳՈՐԾԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԳԱՆԳԱՏՐ ՉԱՆԵԼՈ

Բարեկամական կարգավորման ընթացակարգի միջոցով գործերի կարգավորումից բացի, Դատարանը կարող է քննության ցանկացած փուլում գանգատը հանել գործերի ցուցակից, եթե համարի, որ առկա է հետևյալ իրավիճակներից մեկը (հոդված 37, կետ 1, Կանոն 43).

ա) դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին,

բ) վեճն արդեն կարգավորվել է,

գ) Դատարանի կողմից հիմք ընդունած որևէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Սակայն այդ իրավիճակներից ցանկացածի դեպքում Դատարանը չի կարող գանգատը հանել գործերի ցուցակից, եթե «մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը» պահանջում է շարունակել քննությունը: Օրինակ, *Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Tyrrer v UK)* գործում⁶⁵, որն առնչվում էր երեխայի նկատմամբ կիրառված ֆիզիկական բնույթի պատժին, Դատարանը հրաժարվել էր գանգատը հանել գործերի ցուցակից, դիմողը ինքը ցանկացել էր հետ վերցնել գանգատը, համարելով, որ նրանում արժարժվում են ընդհանուր կարևորության հարցեր, որոնք կարող են ազդեցություն ունենալ Կոնվենցիայի կիրառման վրա, ինչը և պահանջում է շարունակել գործի հետագա քննությունը: Գործերի ցուցակից հանված գանգատը Դատարանը կարող է վերստին ընգրկել գործերի ցուցակում, եթե գտնում է, որ հանգամանքներն արդարացնում են դա (հոդված 37, կետ 2 և Կանոն 43, կետ 5), տե՛ս, օրինակ, ստորև

⁶³ Թիվ 34962/97, 29.7.03:

⁶⁴ Թիվ 42860/98, 20.4.04:

⁶⁵ Թիվ 5856/72, 25.4.78, EHRR 1:

հիշատակված՝ *Աչարն ընդդեմ Թուրքիայի (Acar v Turkey)* գործը⁶⁶: Գանգատը գործերի ցուցակից հանելու դեպքում ծախսերի փոխհատուցման հարցի որոշումը թողնվում է Դատարանի հայեցողությանը: Համապատասխանաբար, Դատարանի հայեցողության շրջանակում է գտնվում նաև դիմողին ծախսերի փոխհատուցում տրամադրելու հարցը (Կանոն 43, կետ 4-ի համաձայն), ինչպես, օրինակ, *Պիզանոն ընդդեմ Իտալիայի (Pisano v Italy)* գործում⁶⁷ արել է Մեծ պալատը: Գործնականում Դատարանը ծախսերի հատուցումը դիմողի վրա չի դնում:

Ընդունելիության մասին որոշում կայացնելուց հետո գործերի ցուցակից գանգատը հանվում է վերջնական վճիռ կայացնելու միջոցով (Կանոն 43, կետ 3), որն այնուհետև ուղարկվում է Նախարարների կոմիտե՝ ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար (համաձայն հոդված 46, կետ 2-ի):

3.3.1 Գանգատին հետամուտ լինելուց հրաժարվելը (հոդված 37, կետ 1, (ա) ենթակետ)

37-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված առաջին դեպքը պարզ է և Դատարանը որոշակի ժամանակահատվածում դիմողին մի քանի հնարավորություն է տալիս պատասխանելու Դատարանի նամակին՝ նախքան գանգատը գործերի ցուցակից հանելը: Օրինակ, *Պելտոնենն ընդդեմ Ֆինլանդիայի (Peltonen v Finland)* գործը⁶⁸ հանվել էր գործերի ցուցակից 2000 թվականի սեպտեմբերին՝ այն բանից հետո, երբ 2000 թվականի մարտ ամսից ի վեր պատասխան չկար դիմողից: *Յականն ընդդեմ Թուրքիայի (Yakan v Turkey)* գործում⁶⁹ դիմողը 1999 թվականի մարտից ի վեր չէր պատասխանում Դատարանի նամակներին (այդ թվում և պատվիրված փոստով առաքվող նամակներին):

3.3.2 Վեճի կարգավորումը (հոդված 37, կետ 1 (բ) ենթակետ)

Երկրորդ կատեգորիան կազմում են այն գործերը, որոնք համարվում են «կարգավորված»⁷⁰: Օրինակ, 37-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետը կիրառվել էր *Սյաոլինն ընդդեմ Հունգարիայի (Xiaolin v Hungary)* գործում⁷¹, այն բանից հետո, երբ Հունգարիայի կառավարությունը մերժեց դիմողի էքստրադիցիայի մասին Չինաստանի կառավարության պահանջը: Նմանապես, գործերի ցուցակից հանվել էր *Աբդունին ընդդեմ Ֆրանսիայի (Abdouni v France)* գործը⁷²՝ Ալժիրի քաղաքացի դիմողի նկատմամբ դատական արգելանքը վերացնելուց հետո: *Պիզանոն ընդդեմ Իտալիայի (Pisano v Italy)* գործում⁷³ դիմողը 6-րդ հոդվածի հիման վրա բողոքում էր իր դեմ հարուցված քրեական վարույթի անարդարության դեմ, սակայն գանգատը, վեճն արդեն կարգավորված լինելու հիմքով, Մեծ պալատի կողմից հանվեց գործերի ցուցակից, այն բանից հետո, երբ գործի կրկին քննության արդյունքում դիմողն արդարացվեց: Գործի հետագա քննության ընթացքում լսեցին առանցքային վկային (այն, որ վկան չէր հարցաքննվել դիմողի գանգատի հիմքերից մեկն էր), և դիմողի նկատմամբ կայացված դատավճիռը բեկանվեց: *Բալրկչին ընդդեմ Թուրքիայի (Balikçi v Turkey)* գործում⁷⁴ քաղաքացիական ծառայող դիմողի նկատմամբ կիրառվել էր կարգապահական տույժ՝ այն բանի համար, որ նա մասնակցել էր քաղաքացիական ծառայողների արհմիութենական իրավունքների բացակայության դեմ ուղղված ակցիային: Սակայն, հետագայում Թուրքիայի սահմանադրության մեջ մտցվեցին այդ իրավունքները ճանաչող փոփոխություններ, Եվրոպական կոնվենցիային համապատասխանեցվեց նաև քաղաքացիական ծառայողների արհմիութենական իրավունքների մասին օրենսդրությունը, իսկ դիմողի նկատողությունը համաներման արդյունքում հանվեց նրա անձնական գործից: Բացի դրանից, դիմողը շարունակեց աշխատել իր գործատուի մոտ՝ առանց նրա կողմից հետապնդման ենթարկվելու: Այդ հանգամանքներում

⁶⁶ Թիվ 26307/95, 6.5.03, (2004) 38 EHRR 2:

⁶⁷ Թիվ 3673/97, 24.10.02, (2002) 34 EHRR 27:

⁶⁸ Թիվ 2732/95, 28.9.00:

⁶⁹ Թիվ 43362/98, 19.9.00:

⁷⁰ Տե՛ս նաև այնպիսի գործեր, ինչպիսիք են *Սազերլենդի և Վարեյի (Sutherland and Varey)*, գործերը, որոնց մասին խոսվում է վերը՝ 3.2-ում՝ «Բարեկամանական կարգավորում»:

⁷¹ Թիվ 58073/00, 8.3.01:

⁷² Թիվ 37838/97, 27.2.01:

⁷³ Թիվ 3673/97, 24.10.02, (2002) EHRR 27:

⁷⁴ Թիվ 26481/95, 6.1.04:

Դատարանը վեճը կարգավորված համարեց և այն, 37-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետի հիման վրա, հանեց գործերի ցուցակից:

Ընդհակառակը, վեճը 37-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետի իմաստով «կարգավորված» չի համարվի, եթե քրեական օրենսդրության այն դրույթը, որի հիման վրա դիմողը դատապարտվել է, հետագայում վերացվում է, իսկ դիմողի նկատմամբ կայացված դատավճիռը մնում է անփոփոխ⁷⁵:

3.3.3 Գանգատի քննությունը շարունակելն արդարացված չլինելը (հոդված 37, 1-ին կետ (գ) ենթակետ)

Երրորդ կատեգորիան, սակայն, շատ ավելի դժվար է բնորոշել լիարժեք ճշգրտությամբ: Սա Դատարանին հայեցողության լայն հնարավորություն է տալիս այն գանգատները գործերի ցուցակից հանելիս, որոնց քննությունը շարունակելը «ցանկացած այլ պատճառով» արդարացված չէ: 2001 թվականին Դատարանը վկայակոչել է այս դրույթը, որպեսզի արդարացնի Թուրքիայի դեմ մի շարք գանգատները գործերի ցուցակից հանելը, որոնք առնչվում էին այդ երկրի կողմից մարդու իրավունքների ենթադրյալ կոպիտ խախտումներին. *Աքմանը ընդդեմ Թուրքիայի (Akman v Turkey)*⁷⁶ (անվտանգության ուժերի կողմից մահվան հանգեցրած հրազենի գործադրում), *Հարանը ընդդեմ Թուրքիայի (Haran v Turkey)*⁷⁷, *Թոգչունը ընդդեմ Թուրքիայի (Togcu v Turkey)*⁷⁸ և *ԹԱ-ն ընդդեմ Թուրքիայի (TA v Turkey)*⁷⁹ (բոլոր երեքն էլ «անհետացումների մասին» գործեր են): Այդ գործերից յուրաքանչյուրում կողմերը քննարկել են բարեկամական կարգավորման պայմանները, բայց այդպես էլ համաձայնության չէին եկել: Այնուհետև, կառավարությունը Դատարանին ներկայացրել է պայմանների իր տարբերակը, խնդրելով 37-րդ հոդվածի հիման վրա, կարճել գործը: Դիմողները յուրաքանչյուր գործում առարկել էին գանգատները գործերի ցուցակից հանելու դեմ՝ հիմնավորելով, որ կառավարության կողմից առաջարկված պայմանները չեն կարգավորում վեճը կամ այլ կերպ հիմնավորում դրանց քննությունը չշարունակելը: Բայցևայնպես, Պալատի իրար հաջորդող մի քանի որոշումների արդյունքում այդ գանգատները հանվեցին գործերի ցուցակից: Կարծիք կա, որ Դատարանը չպետք է⁸⁰ առաջնորդվեր ոչ հստակ սահմանված այդ դրույթով, Կոնվենցիայի նմանօրինակ լուրջ խախտումներին վերաբերող այն գանգատները գործերի ցուցակից հանելու համար, որոնք պատշաճ կերպով չէին կարգավորվում կառավարության կողմից առաջարկված բարեկամական կարգավորման պայմաններով⁸¹: Իրականում էլ, Դատարանի Մեծ պալատը հետագայում անհանգստություն հայտնեց դեպքերի այդօրինակ զարգացման կապակցությամբ: *ԹԱ-ի «անհետացման» վերաբերյալ գործը հանձնվել էր Մեծ պալատին, որն Աքարը ընդդեմ Թուրքիայի (Acar v Turkey)* գործով⁸² իր ընդունած որոշմամբ 2003 թվականին, ըստ էության, «վերացրել» է գանգատը գործերի ցուցակից կարճելու մասին Պալատի որոշումը և այն 37-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, վերստին ընդգրկեց գործերի ցուցակում⁸³: Դատարանը գտավ, որ գործի հանգամանքներից կախված 37-րդ հոդված 1-ին կետի (c) ենթակետի հիման վրա գործերի ցուցակից հանելը կարող է արդարացված լինել պատասխանող պետության միակողմանի հայտարարությամբ, նույնիսկ եթե դիմողը առարկում է: Դատարանի կողմից մատնանշվել են հետևյալ գործոնները՝ որոնք կարող են նշանակություն ունենալ⁸⁴.

- բողոքների բնույթը,

⁷⁵ *L.-ն և Վ.-ն ընդդեմ Ավստրիայի (L. and V. v Austria)*, գործը, թիվ 39392/98 և թիվ 39829/98, 9.1.03:

⁷⁶ Թիվ 37453/97, 26.6.01:

⁷⁷ Թիվ 25754/94, 26.3.02:

⁷⁸ Թիվ 27601/95, 9.4.02:

⁷⁹ Թիվ 26307/95, 9.4.02:

⁸⁰ Հեղինակը եղել է *Akman, Togcu »ժ (TA)-ում Acar v Turkey* գործերով դիմողների ներկայացուցիչներից մեկը, որի մասին խոսվում է ստորև:

⁸¹ Այդ որոշումների առավել հանգամանակից քննադատությունը տես՝ Sardaro, P., 'Jus Non Dicere for Allegations of Serious Violations of Human Rights: Questionable Trends in the Recent Case Law of the Strasbourg Court' [2003] EHRLR 601:

⁸² Թիվ 26307/95, 6.5.03, (2004) 38 EHRLR 2:

⁸³ Իր հետագա՝ ըստ էության որոշման մեջ (8.4.04) Դատարանը «անհայտ կորելու» դեպքի կապակցությամբ իրկանացված հետաքննության թերությունների հիմքով 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց:

⁸⁴ 75-77 կետեր:

- համեմատելի են արդյոք բարձրացվող հարցերն այն խնդիրների հետ, որոնց վերաբերյալ Դատարանը նախորդ գործերում արդեն հայտնել է իր կարծիքը,
- նախորդ համանման գործերով Դատարանի կողմից կայացված վճիռների կատարման համատեքստում, պատասխանող պետության ձեռնարկած միջոցների բնույթն ու շրջանակները,
- այդ միջոցների ազդեցությունը տվյալ գործի վրա,
- կա արդյոք կողմերի միջև վեճ գործի փաստերի վերաբերյալ, և եթե այո՝ ինչ չափով և ինչպիսի *prima facie* ապացուցողական արժեք ունեն գործի հանգամանքների կապակցությամբ կողմերի բացատրությունները,
- արդյոք Դատարանը, վիճելի հանգամանքները պարզելու նպատակով, արդեն ձեռք է բերել գործի վերաբերյալ ապացույցներ,
- արդյոք կառավարությունն իր միակողմանի հայտարարությամբ ճանաչել է Կոնվենցիայի որևէ խախտում, և եթե այո՝ ապա ինչպիսիք են այդ ճանաչման շրջանակներն ու այն միջոցը, որով մտադրվում է փոխհատուցում տալ դիմողին:

Ակարի գործում Մեծ Պալատը որոշել էր գանգատը չհանել գործերի ցուցակից, քանի որ կողմերի միջև տարակարծություններ կային գործի փաստերի մեծամասնության կապակցությամբ, կառավարությունը հրաժարվել էր ճանաչել որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն, և նրա միակողմանի հայտարարությունը պատշաճ կարգով չէր անդրադառնում Կոնվենցիայի հիման վրա դիմողի բերած բողոքներին: Թերևս ամենանշանակալին այն հանգամանքն էր, որ բացակայում էր որևէ պարտավորություն անցկացնել հետաքննություն Կոնվենցիայի հիման վրա բերված «անհետացման» վերաբերյալ բողոքների կապակցությամբ: Համապատասխանաբար, հոդված 37-ի 1-ին կետի համաձայն «մարդու իրավունքները հարգելու» չափանիշը, պահանջում էր գործը քննել ըստ էության: Իրենց միասնական հանրնկնող կարծիքում դատավորներ Բրատցան, Տուլկենսը և Վաջիչը հայտնեցին այն տեսակետը, որ գանգատը գործերի ցուցակից հանելու ընթացակարգը «պետք է մնա որպես բացառիկ միջոց և, որևէ դեպքում, չպետք է օգտագործվի բարեկամական կարգավորման վերաբերյալ դիմողի անհամաձայնությունը շրջանցելու համար»:

Հոդված 37-ի 1-ին կետի (c) ենթակետի հիման վրա գործերի ցուցակից հանելու մյուս դեպքերը ցույց են տալիս, որ այդ դրույթի կարգավորման առարկան հիմնականում հանրնկնում է հոդված 37-ի 1-ին կետի (b) ենթակետի կարգավորման առարկային: *Քալանթարին ընդդեմ Գերմանիայի (Kalantari v Germany)* գործում⁸⁵ դիմողին Իրան արտաքսելու մասին նախորդ վճիռը վերացվեց և, համապատասխանաբար, գործը հոդված 37-ի 1-ին կետի (c) ենթակետի հիման վրա հանվեց գործերի ցուցակից այն հիմքով, որ դրա հետագա քննության անհրաժեշտությունն այլևս չկար: Հիմնավորելով այդ վճիռը, Դատարանը տվյալ գործը հակադրեց *Ահմեդն ընդդեմ Ավստրիայի (Ahmed v Austria)* գործով⁸⁶ իր կայացրած որոշմանը, որտեղ իշխանությունները պարզապես որոշել էին կասեցնել դիմողին (Սոմալի) արտաքսելու մասին կարգադրության կատարումը, որն այդուհանդերձ մնում էր ուժի մեջ: *Վիկտոր-Էմանուիլ Սավոյսկին ընդդեմ Իտալիայի (Victor Emmanuel of Savoy v Italy)* գործով⁸⁷ դիմողը՝ Իտալիայի վերջին թագավորի զավակը, բողոքում էր Իտալիա մեկնելու և բնակություն հաստատելու հարցում իր համար օրենքով արգելք ստեղծելու դեմ: Գանգատը գործերի ցուցակից հանվել էր ներքին օրենսդրության մեջ փոփոխություններ մտցնելուց հետո, որոնք թույլ էին տալիս դիմողին վերադառնալ Իտալիա: *JM-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (JM v UK)* գործում⁸⁸ դիմողը բռնաբարության զոհ էր և, համաձայն ներքին օրենսդրության, կարող էր խաչաձև հարցաքննության ենթարկվել իրեն բռնաբարողի կողմից: Գանգատը հոդված 37-ի 1-ին կետի (c) ենթակետի հիման վրա հանվել էր գործերի ցուցակից այն բանից հետո, երբ պետությունը համաձայնեց՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում վճարել 6 հազար ֆունտ ստեռլինգ՝ գումարած իրավաբանական ծախսերը: Բացի դրանից, 1999 թվականին⁸⁹ ուժի մեջ մտավ տուժողին անձամբ խաչաձև հարցաքննության ենթարկելու՝ մեղադրյալի հնարավորությունը սահմանափակող օրենքը:

⁸⁵ Թիվ 51342/99, 11.10.01:

⁸⁶ Թիվ 25964/94, 17.12.96, (1997) 24 EHRR 278:

⁸⁷ Թիվ 53360/99, 24.4.03:

⁸⁸ Թիվ 41518/98, որոշում. 28.9.00

⁸⁹ Անչափահասների գործերով արդարադատության և քրեական ապացույցների մասին 1999թվականի Ակտը:

3.4. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Եթե գործը չի հաջողվում լուծել բարեկամական կարգավորման ընթացակարգի շրջանակներում (շատ դեպքերում այդպես էլ լինում է), Դատարանը կողմերին առաջարկում է տալ վերջնական գրավոր փաստարկներ (հայտնի է որպես «Հուշագիր»):

Լինելով Դատարան ներկայացվող վերջին փաստաթուղթը՝ հուշագիրը պետք է հակիրճ շարադրի դիմողի գործը և հետևի նախնական զանգատի տրամաբանությանը, այն է՝ գործի փաստերը, որոնց հաջորդում են գործին վերաբերող օրենսդրությունը, այնուհետև կոնվենցիայի խախտումը հիմնավորող փաստարկները: Ինչպես և այլ առարկությունների դեպքում, Հուշագիրը ևս պետք է համապատասխանի Գրավոր առարկություններ ներկայացնելու պրակտիկայի մասին ուղեցույցում սահմանված կանոններին (տես վերը՝ 2.5.6-ում ընդգծվածը): Ուղեցույցը⁹⁰ սահմանում է, որ ընդունելիության մասին որոշումից հետո կողմերի ներկայացվելիք առարկությունները պետք է ներառեն՝

- զանգատի ընդունելիության մասին որոշման մեջ նշված գործի փաստերի վերաբերյալ կողմի դիրքորոշումը հաստատող հակիրճ հատարարություն,
- գործի էությանը վերաբերող իրավական փաստարկները,
- Դատարանի առաջադրած փաստական կամ իրավական բնույթի ցանկացած կոնկրետ հարցի պատասխանը:

Հուշագիրը մի շարք առումներով կարող է տարբերվել հիմնական զանգատից: Դրանում չեն կարող արժարծվել արդեն անընդունելի ճանաչված հարցերը: Դիմողն իր հուշագրում, իհարկե, պետք է նաև անդրադառնա իր փաստարկներին կառավարության տված պատասխաններին: Կառավարության պատասխանի դիտողությունների լույսի ներքո դիմողը կարող է որոշել չանդրադառնալ որոշ փաստարկների (նույնիսկ եթե դրանք ընդունելի են ճանաչվել) կամ կարող է փորձել ընդգծել իր հիմնական փաստարկները, առանձնացնելով դրանք երկրորդականներից: Հարկավոր է միշտ նկատի ունենալ, որ Եվրոպական կոնվենցիայի համակարգն առաջին հերթին գրավոր, այլ ոչ թե բանավոր ընթացակարգ է ենթադրում: Հնարավոր է, որ առանձին փաստաբաններ սովոր լինեն այն պրակտիկային, երբ ներպետական վարույթներում գրավոր դիտողություններն ու փաստարկների կարճ շարադրանքը լրացվում են երկարաշունչ բանավոր ելույթներով, սակայն Եվրոպական դատարանն այդպիսի շռայլություն թույլ չի տալիս: Դատական լսումները, եթե այդպիսիք ընդհանրապես անցկացվում են, սովորաբար տևում են կես օրից ոչ ավելի և դիմողի փաստաբանը պետք է իր ելույթն ավարտի 30 րոպեում՝ կառավարությանը պատասխանելու և եզրափակիչ ճառի համար լրացուցիչ ստանալով ևս տաս րոպե: Համապատասխանաբար, հուշագիրը միշտ պետք է կազմվի բանավոր լսումների սահմանափակումները նկատի ունենալով: Իրականում շատ գործերով բանավոր լսումներ ընդհանրապես չեն անցկացվում (տես ստորև՝ 3.5-ում):

Այս փուլում Դատարանին ոչինչ չի խանգարում հաշվի առնել ցանկացած նոր տեղեկատվություն, ապացույցներ կամ նոր փաստարկներ⁹¹, թեև գործի շրջանակներն, անշուշտ, որոշվում են ընդունելիության մասին որոշմամբ:

41 հոդվածի համաձայն վնասի և ծախսերի պահանջվող փոխհատուցման մասին պահանջը հարկավոր է կամ ներառել հուշագրի մեջ, կամ ընդունելիության մասին որոշում կայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում (կամ այլ սահմանված ժամկետում) ներկայացնել Դատարանին (Կանոն 60)⁹²: Նշված պահանջը չներկայացնելը կնշանակի, որ փոխհատուցում չի տրամադրվի (Կանոն 60(2))⁹³: Փոխհատուցման պահանջը կարող է առնչվել և՛ նյութական, և՛ ոչ նյութական վնասին: Յուրաքանչյուր դեպքում էլ դիմողը պետք է բավարար փաստաթղթային հիմնավորում ներկայացնի իր կրած վնասի վերաբերյալ: Շատ դեպքերում Դատարանը փոխհատուցում տրամադրելը մերժել է պարզապես այն պատճառով, որ դիմողը չի կարողացել պատշաճ

⁹⁰ Պրակտիկայի մասին ուղեցույց. Գրավոր փաստարկներ, կետ 13:

⁹¹ Տե՛ս, օրինակ, *Կ-ն և Տ-ն ընդդեմ Ֆինլանդիայի (K and T v Finland)*, գործը, թիվ 25702/94, 12.7.01:

⁹² Պրակտիկայի մասին ուղեցույց. Գրավոր փաստարկներ, կետ 13 (բ) ենթակետը նույնպես պահանջում է, որ դիմողները պահպանեն արդարացի փոխհատուցման մասին պահանջ ներկայացնելու վերաբերյալ ուղեցույցի ցուցումները: Այդ ուղեցույցը Դատարանի կողմից դեռևս չի հրապարակվել:

⁹³ Տե՛ս, օրինակ, *Ամբրուոզին ընդդեմ Իտալիայի (Ambrosi v Italy)*, գործը, թիվ 31227/96, 19.10.00, (2002) 35 EHRR 5:

կերպով հիմնավորել իր պահանջները կամ ընդհանրապես չի ներկայացրել հիմնավորումներ: Նյութական վնասի փոխհատուցման պահանջները կարող են պարունակել, օրինակ, աշխատավարձի կամ այլ եկամտի կորստի մասին փաստաթղթային ապացույցներ: Ոչ նյութական վնաս կարող են համարվել Կոնվենցիայի խախտման պատճառով կրած տասապանքն ու վիշտը, որոնք, եթե հնարավոր է պետք է հաստատվեն բժշկական փաստաթղթերով: Խորհուրդ է տրվում նյութական եւ ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջների առնչությամբ ներկայացնել կրած վնասի չափի մասին դիմողի՝ երդմամբ վավերացված գրավոր հայտարարությունը: Դիմումի ձևով կամ ցանկացած այլ տեսքով ներկայացվող փոխհատուցման պահանջների նպատակը պետք է լինի նաև խախտման և պատճառված վնասի միջև հստակ կապի առկայության հաստատումը: Օրինակ, կարող է անհրաժեշտություն առաջանալ հաստատելու, որ եթե Կոնվենցիայի խնդրո առարկա խախտումը տեղի չունենար, դիմողը որոշակի չափի աշխատավարձ կստանար: Այդ իրավիճակում դիմողը պետք է Դատարանին տեղեկատվություն ներկայացնի համանման այն պաշտոնների համար վճարվող աշխատավարձերի մասին, որոնք դիմողը կարող էր զբաղեցնել: Ծախսերի ժամանակացույցը պետք է լինի առավելագույնս հանգամանալից, այդ թվում, պարունակի լրացուցիչ փաստաթղթային հիմնավորում, որի բացակայության պարագայում դիմողի ծախսերը հնարավոր է, որ փոխհատուցվեն մասնակի կամ ընդհանրապես չփոխհատուցվեն: Դատարանը ծախսերի փոխհատուցում է տրամադրում միայն այն դեպքում երբ ապացուցվում է, որ այդ ծախսերն իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ և ողջամիտ: Այդ պատճառով փաստաբաններին խորհուրդ է տրվում ծախսերը հաստատող փաստաթղթերը ներկայացնել Դատարան նույնքան մանրամասնորեն, որքան ներպետական դատարաններ ներկայացվողները՝ կատարված աշխատանքի բոլոր մանրամասների, ամսաթվերի, ծախսված ժամանակի ու զանձվող ժամավճարի վերաբերյալ նշումով: Փաստաբանները պետք է ի վիճակի լինեն համոզել Դատարանին, որ դիմողը իրականում կատարել է բոլոր այդ ծախսերը, օրինակ՝ ներկայացնելով իր վստահորդի նամակը, որը պարունակում է նշում վերջինիս կողմից վճարելու պարտավորության վերաբերյալ: *Օզթյուրքն ընդդեմ Գերմանիայի (Öztürk v Germany)* գործում⁹⁴ ծախսերի փոխհատուցման մասին դիմողի պահանջը Դատարանի կողմից մերժվել էր, *inter alia*, քանի որ ոչինչ չէր վկայում այն մասին, որ նա վճարել էր, կամ պարտավորվել էր վճարել խնդրո առարկա գումարը⁹⁵: 41 հոդվածի հիման վրա կարող է պահանջվել ցանկացած ողջամտորեն կատարված ծախսերի փոխհատուցում: Դրանց թվին կարող են դասվել անհրաժեշտ տրամսպորտային ծախսերը (այդ թվում Ստրասբուրգում դատական լսմանը մասնակցելու հետ կապված ծախսերը), հեռախոսային խոսակցությունների, պատճենահանման, փոստային և առաքման, թարգմանության և այլ ծախսերը:

Ծախսերի և ծախքերի փոխհատուցման պահանջը կարող է նաև ներառել ներպետական իրավական համակարգում Կոնվենցիայի խախտման վերացման համար կատարված ծախսերը: Ինչպես որ Եվրոպական դատարանում քննության ժամանակ կատարված ծախսերի դեպքում, ներպետական դատարաններին վերաբերող ցանկացած պահանջ պետք է ամբողջովին դասակարգվեն:

41-րդ հոդվածին համապատասխան բերված դիմողի յուրաքանչյուր պահանջ Դատարանի կողմից ուղարկվում է պատասխանող պետությանը՝ պատասխան դիտողությունների համար (Կանոն 60, կետ 3): 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխհատուցման տրամադրման հետ կապված հարցերն ավելի մանրամասն քննարկվում են 9-րդ գլխում:

3.5 ԲԱՆԱՎՈՐ ԼՍՈՒՄՆԵՐ

Ներկայումս Դատարանի կողմից գործերի ելության քննությունը բանավոր լսումների միջոցով ավելի շուտ բացառություն է, քան կանոն (Կանոն 59, կետ 3): Գործերի գերակշիռ մեծամասնությունը լուծվում է առանց լսում անցկացնելու: Դատարանն ավելի հակված է լսումներ անցկացնել գործի փաստական հանգամանքների կամ համապատասխան ներքին օրենսդրության ու պրակտիկայի լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտության դեպքում:

⁹⁴ 8544/79, Շարք Ա, թիվ 73, 21.2.84, (1984) 6 EHRR 409:

⁹⁵ Կետ 9: Տես՝ նաև *Դաջենն ընդդեմ Միացյալ Թագավորության (Dudgeon v UK)*, գործը, թիվ 7525 / 76, 22.10.81, (1983) 5 EHRR 573, 21-22 կետեր:

Կարծիք կա, որ լսման անցկացման անհրաժեշտությունը գնահատելիս գործի իրավական կամ քաղաքական կարևորությունը նույնպես կարող է էական գործոն հանդիսանալ: Բանավոր լսման անցկացման օրը սովորաբար նշանակվում է Դատարանի կողմից՝ առանց դիմողի ներկայացուցիչներին իրազեկելու: Դատարանը դժկամությամբ է փոխում բանավոր լսումների օրերը, սակայն դա բացառված չէ: Եթե դիմողը կամ նրա ներկայացուցիչը չեն կարողանում հարգելի պատճառով մասնակցել լսմանը, խորհուրդ է տրվում նախապես խոսել Քարտուղարության իրավաբանի հետ և դրանից հետո նամակ ուղարկել՝ շարադրելով լսման օրը փոխելու մասին խնդրանքի պատճառները: Դատարանի քարտուղարը սովորաբար գործի վերաբերյալ մամլո հաղորդագրություն է հրապարակում մինչև լսման օրը, իսկ երկրորդ հաղորդագրությունը, որպես կանոն, հրապարակվում է լսման անցկացման օրը: Առաջիկայում անցկացվելիք բանավոր լսումների ժամանակացույցը տեղադրվում է Դատարանի կայքէջում:

Եթե Դատարանը որոշի բանավոր լսում անցկացնել, ապա իր որոշման մասին կողմերին տեղեկացնող նամակում կարող է թվարկել մի շարք հարցեր, որոնց պետք է կողմերը պատասխանեն լսման ժամանակ: Դատարանը մինչև բանավոր լսման օրը սահմանում է այն վերջնաժամկետը որի ընթացքում պետք է ներկայացվեն ցանկացած լրացուցիչ փաստաթղթեր: Բանավոր լսումից առաջ դիմողի ներկայացուցիչը պետք է Դատարանի թարգմանիչների համար ներկայացնի Դատարանում բանավոր ելույթի տեքստի պատճենը: Դա պարտադիր պահանջ չէ, սակայն խորհուրդ է տրվում դա անել, եթե իհարկե հնարավոր է, քանի որ այն կհեշտացնի ելույթների համաժամանակյա թարգմանությունը: Եթե ելույթի տեքստը հնարավոր չէ ուղարկել նախօրոք, ապա հարկավոր է ծայրահեղ դեպքում ուղարկել դրա հիմնական դրույթները: Անշուշտ, նախօրոք ուղարկվող ոչ մի տեքստով փաստաբանները կաշկանդված չեն և ազատ են փոխել իրենց ելույթները, ինչպես հարմար են գտնում:

Դատարանը նաև կողմերին խնդրում է մինչև բանավոր լսումը սկսելը ներկայացնել բոլոր նրանց անունները, ովքեր պիտի ներկա լինեն լսմանը՝ ներառյալ ներկայացուցիչները, խորհրդատուները և դիմողները: Դատարանի կանոնակարգը պահանջում է, որ բանավոր լսմանը դիմողին ներկայացնի փաստաբանը, ով իրավունք ունի փաստաբանական գործունեությամբ զբաղվել Կոնվենցիայի ցանկացած անդամ երկրում, կամ Դատարանի կողմից հաստատված այլ ներկայացուցիչ (Կանոն 36, կետ 3): Նախագահը կարող է դիմողներին թույլատրել անձամբ ներկայացնելու իրենց գործը⁹⁶, սակայն պրակտիկայում դա շատ հազվադեպ է պատահում: Եթե լսման ընթացքում դիմողին ներկայացնում է փաստաբանը, Դատարանը կարող է դիմողին թույլ տալ, որպեսզի ինքը ևս հանդես գա ելույթով⁹⁷: Դատարանը կարող է թույլատրել որպեսզի դիմողի անունից հանդես գան մի քանի ներկայացուցիչներ (ժամանակի ընդհանուր չափաբաժնի սահմաններում):

Բանավոր լսումը սովորաբար անցկացվում է Դատարանի պաշտոնական լեզուներից մեկով (անգլերեն կամ ֆրանսերեն), սակայն Նախագահը կարող է թույլատրել նաև անդամ պետություններից մեկի պաշտոնական լեզվի օգտագործումը: Անհրաժեշտ է Դատարանին նախապես տեղեկացնել՝ եթե կողմերից մեկը ցանկանում է Դատարանում հանդես այլ լեզվով, քան անգլերենը կամ ֆրանսերենը:

Լսումը վարում է համապատասխան պալատի Նախագահը (Կանոն 64): Բանավոր լսումները սովորաբար տևում են երկու ժամից ոչ ավելի՝ կամ ժամը 9.00-ից մինչև 11.00, կամ ժամը 14.30-ից մինչև 16.30-ը: Կողմերին լրացուցիչ ժամանակ տրվում է միայն բացառիկ դեպքերում: Հիմնական բանավոր փաստարկները ներկայացնելու համար դիմողներին սովորաբար տրվում է 30 րոպե⁹⁸: Այնուհետև պատասխանի համար 30 րոպե է տրվում պատասխանող կառավարությանը (ընդունելիության մասին լսումների ընթացքում առաջինը սովորաբար ելույթ է ունենում կառավարությունը, իսկ պատասխանում է դիմողը): Ժամանակային այդ սահմանափակումները հարկավոր է խստորեն պահպանել, և կարևոր է, որ փաստաբանները չգերզանցեն իրենց հատկացված 30 րոպեն, այլապես Նախագահը կարող է նրանց ընդհատել (անկախ նրանից, ավարտել են արդյոք իրենց ելույթը, թե ոչ), կամ մյուս կողմին պատասխանելու համար իրեն տրված ժամանակը կկրճատվի: Նախագահը սովորաբար լսումից

⁹⁶ Տե՛ս, օրինակ, *Վլոխը ընդդեմ Լեհաստանի (Wloch v Poland)*, գործը, թիվ 27785/95, 19.10.00, (2002) 34 EHRR 9:

⁹⁷ Տե՛ս, օրինակ, *Հարթմանը ընդդեմ Չեխական Հանրապետության (Hartman v Czech Republic)*, գործը, թիվ 53341/99, 10.7.03; *Գորձելիկը և այլքը ընդդեմ Լեհաստանի (Gorzeliik and others v Poland)*, գործը, թիվ 44158/98, 17.2.04, (2004) 38 EHRR 4:

⁹⁸ Բացառիկ դեպքերում այդ ժամանակը երկարաձգվել է մինչև 45 րոպե (ինչպես *Օձալան v Turkey* գործում, թիվ 46221/99, 12.3.03, (2003) 37 EHRR 10):

առաջ կարճ ոչ պաշտոնական հանդիպում է անցկացնում, որպեսզի կողմերին հիշեցնի հատկացված ժամանակում տեղավորվելու անհրաժեշտությունը և քննարկի լսման կապակցությամբ ցանկացած այլ հարցեր՝ օրինակ, կապված դատարանի կողմից այն փաստաթղթերի ընդունման հետ, որոնք կողմերն ուշ են ներկայացրել:

Ակնհայտ է, որ Եվրոպական կոնվենցիայի հիման վրա բերված գանգատների համատեքստում բանավոր ելույթները որոշ առումներով խիստ տարբերվում են ներպետական դատարաններում փաստաբանների ելույթներից: Վարույթը հիմնականում գրավոր է և առանձին դեպքերում ավարտվում է կարճատև դատական լսմամբ: 30 րոպեում ներկայացուցիչները պետք է ավելի վաղ ներկայացված գրավոր պնդումները լրացնեն կողմերի անունից վերջնական բանավոր փաստարկներով: Ելույթները համաժամանակյա թարգմանվում են, և դատավորներից ոմանք լսում են թարգմանիչներին, այլ ոչ թե փաստաբաններին: Դրա համար փաստաբաններին խորհուրդ է տրվում խոսել հստակ և դանդաղ: Կողմերը կարող են զեկուցող դատավորից ակնկալել գործի խորությամբ իմացություն, սակայն չպետք է նույնը ակնկալել մնացած դատավորներից: Հաշվի առնելով ժամանակի խիստ սահմանափակ լինելը, կարիք չկա հանգամանորեն շարադրել գործի փաստական հանգամանքները (եթե իհարկե փաստական հանգամանքների վերաբերյալ էական տարածայնություններ չկան): Անշուշտ, բոլոր արժարժվող խնդիրների վերաբերյալ փաստարկներ բերելու անհրաժեշտություն չկա՝ եթե իհարկե այդ ամենն առկա է ավելի վաղ Դատարան ներկայացված գրավոր փաստարկներում: Սովորաբար բանավոր ելույթները սկսվում են կողմերի միջև առաջնահերթ վիճելի հարցերի վրա: Եթե բանավոր լսումից առաջ Դատարանը կոնկրետ հարցեր է տվել կողմերին, ապա այդ ժամանակ, անշուշտ, այդ հարցերին պետք է անդրադառնա բանավոր ելույթը (թեպետ, իհարկե, պարտադիր չէ, որ դրանք սահմանափակվեն Դատարանի կոնկրետ հարցերի պատասխաններով): Ժամանակային խիստ սահմանափակումները նկատի ունենալով փաստաբանները հաճախ պատրաստում են ժամանակով ճշտված գրավոր ճառեր, որպեսզի չգերազանցեն 30 րոպեանոց չափաբաժինը: *ժդանոկն ընդդեմ Լատվիայի* գործով բանավոր ելույթի օրինակը տես C հավելվածում⁹⁹:

Երբ կողմերը ավարտում են 30 րոպեանոց իրենց ելույթները, Դատարանը կարող է հարցեր տալ ներկայացուցիչներին: Հարցերը հաճախ, թեև ոչ միշտ, հասցեագրված են կոնկրետ կողմին: Հարցեր տալ կարող է ցանկացած դատավոր (Կանոն 64, կետ 2), ընդ որում՝ շատ արագ հաջորդականությամբ: Դատարանը կողմերին դատավորների ցուցակը տրամադրում է այն հերթականությամբ, ինչպես նրանք նստած են Դատարանի դահլիճում, ինչն օգնում է որոշել, թե որ դատավորն ինչ հարց է տվել: Եթե Դատարանը հարցեր է ունենում, սովորաբար (բայց ոչ միշտ) 15 րոպեանոց ընդմիջում է տրվում, որպեսզի կողմերը կշռադատեն պատասխանները: Ընդմիջման ժամանակ կողմերին ուղեկցում են Դատարանի աշխատասենյակներ: Դա շատ լարված պահ է, երբ կողմերը հարկադրված են լինում միաժամանակ կշռադատել Դատարանի հարցերի և մյուս կողմի փաստարկների պատասխանները: Ակնհայտորեն կարևոր է, որ ներկայացուցիչները, խորհրդատուները և դիմողները կարողանան այդ 15 րոպեների ընթացքում աշխատել համատեղ կենտրոնացած:

Ընդմիջումից հետո յուրաքանչյուր կողմին սովորաբար տրվում է 10 րոպե՝ Դատարանի և հակառակ կողմի հարցերին պատասխանելու համար, ընդ որում առաջինը հանդես է գալիս դիմողը, իսկ կառավարությունը պատասխանում է:

Լսումը հրապարակային է, եթե դռնփակ լսում անցկացնելու համար չկան բացառիկ հանգամանքներ (հոդված 40 և Կանոն 63): Օրինակ՝ երեխաների տեսակցության խնդրին վերաբերող՝ *Սկոցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի (Scozzari & Giunta v Italy)* գործում¹⁰⁰ դռնփակ լսում էր անցկացվել: Ցանկացած կողմ կամ ցանկացած այլ շահագրիռ անձ կարող է դիմել դռնփակ լսում անցկացնելու մասին: Այդպիսի դիմումը անհրաժեշտ է հիմնավորել՝ նշելով, թե դռնփակ պետք է լինի լսումն ամբողջությամբ թե դրա մի մասը միայն (Կանոն 63, կետ 3): Դատարանը կարող է մանուկի ներկայացուցիչներին և հանրությանը թույլ չտալ ներկա գտնվելու լսմանը կամ դրա մի մասին՝ հետևյալ պատճառներից մեկի առկայության դեպքում (Կանոն 63, կետ 2).

ա) ի շահ բարոյականության կամ,

բ) ի շահ հասարակական կարգի պահպանման կամ,

⁹⁹ *ժդանոկն ընդդեմ Լատվիայի (Zdanoka v Latvia)*, գործը, թիվ 58278/00, 17.06.04

¹⁰⁰ Թիվ 39221/98 և թիվ 41963/98, 13.7.00, (2002) 35 EHRR 12, կետ 9:

գ) ի շահ ժողովրդավարական հասարակության մեջ ազգային անվտանգության կամ,
ե) երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ,
զ) կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը կամ,
է) այն չափով, որքանով դա, Դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:
Եթե կողմը լսմանը չի ներկայանում առանց հարգելի պատճառի, Դատարանն այնուամենայնիվ կարող է լսումն անցկացնել նրա բացակայությամբ, համոզված լինելով որ դա չի հակասում արդարադատության պատշաճ իրականացմանը (Կանոն 65¹⁰¹):
Դատարանը կարող է կատարել լսումների սղագիր արձանագրություն (Կանոն 70): Լսումը ձայնագրվում է ժապավենի վրա, սակայն սղագիր արձանագրություն կազմվում է միայն Դատարանի որոշմամբ: Սղագիր արձանագրության մեջ նշվում են.
ա) Դատարանի կազմը,
բ) Դատարան ներկայացած անձանց ցուցակը (ներառյալ ներկայացուցիչները, փաստաբանները, խորհրդատուները և գործին մասնակից երրորդ կողմ),
գ) արված հայտարարությունների, տրված հարցերի և ստացված պատասխանների տեքստը,
դ) լսումների ընթացքում կայացրած բոլոր որոշումների տեքստերը:
Եթե սղագիր արձանագրություն է կազմվել, ապա այն ուղղումների համար կողմերին է ուղարկվում սահմանված ժամկետի ընթացքում (ուղղումները, սակայն, չպետք է ազդեն ասվածի իմաստի վրա): Դատարանի խորհրդակցությունը դռնփակ է, և խորհրդակցության բովանդակությունը գաղտնի է (Կանոն 22): Դատարանի բոլոր որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Եթե ձայները կիսվում են հավասարապես անցկացվում է կրկնական քվեարկություն, և երբ ձայները կրկին կիսվում են, Նախագահի ձայնը դառնում է որոշիչ (Կանոն 23, կետ 1): Քվեարկությունը կատարվում է ձեռք բարձրացնելով, և Նախագահը կարող է անվանական քվեարկություն անցկացնել՝ ավագությանը հակառակ կարգով (Կանոն 23, կետ 3):

¹⁰¹ Տե՛ս, օրինակ, *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey)*, գործը, թիվ 25781 / 94, 10.5.01, (2002) 35 EHRR 731, կետ 12: